1907

№ 53 ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 11 ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 11 № 53

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 1907 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ՅՈՒՇԱՐԱՐ“

Թատերական-գրական-գեղարուեստական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Թերթիս աշխատակցելու են հայ գրական-գեղարուեստական աշխարհի բոլոր յայտնի ներկայացուցիչները: Թերթի նպատակն է ծանօթացնել և տարածել գեղարուեստի գաղափարը հասարակութեան զանազան խաւերում, օժանդակել նրա ճշտիւ ըմբռնմանը և ամեն կերպ նպաստել գաւառական բեմերի զարգացման: Այս տարի տալու է 18 համար բազմաթիւ պատկերներով և 9 հատ ընտիր պիեսներ, որոնց, առանց դժուարութեան, ամեն տեղ կարելի է ներկայացնել: Տարեկան բաժնեգինն է 5 ր., արտասահման 6 ր. կամ 3 դոլլար: Բաժնեգինը կարելի է վճարել մաս առ մաս. սկզբից 3 ր. և ապա իւրաքանչիւր ամսի սկզբին մի րուբլի մինչև մայիս: Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է 1) «Գուտտենբերգ» գրավաճառանոցում, 2) «Փարոս» քեօսկում, 3) խմբագրատանը, Սերգիեվսկայա № 3, ուր դիմելու են օտար քաղաքացիք:

Խմբագիր-հրատարակիչ՝ օր. Մարիամ Մեհրաբեան

առ. 2—25

1907 Թ.

„ՆՈՐ-ԱՇԽԱՏԱՆՔ“

Ժողովրդական-հասարակական-տնտեսական

շաբաթաթերթ

«Նոր-Աշխատանքը» նուիրված է լինելու հայ աշխատաւոր գիւղացիութեան և գիւղական պրօլետարիատի տնտեսական-իրաւական շահերի պաշտպանութեանը:

«Նոր-Աշխատանքը» առաջնակարգ տեղ է տալու մեր գաւառի կեանքի ուսումնասիրութեանը:

«Նոր-Աշխատանք»-ում աշխատակցելու են նրա ծրագրին ու ուղղութեանը համակրող հայ ինտելիգենցիան:

«Նոր-Աշխատանքը» իր տարեկան բաժանորդներին տալու է ձրի չորս-գիրք նուիրւած գիւղատնտեսութեանը և ժամանակակից կեանքի իրաւական հարցերին:

ԲԱԺՆԵԳԻՆԸ

Ռուսաստանում		Արտասահմանում	
Տարին	4 ր.	Տարին	18 ֆր.
Կէս տարին	2 ր. 50 կ.	Կէս տարին	10 ֆր.

Հասցէն՝ Тифлисъ, редакцію журнала «Норъ-Ашхатанкъ», Бебутовская № 50.

6—0 ա. Խմբագիր-հրատարակիչ՝ Վիրգինէ Աթանասեան

Նոր-Նախիջևանի Թեմական Դպրոցի Հոգաբարձութիւնը

ՏԵՍՉԱԿԱՆ ԹԱՓՈՒՐ

պաշտօնը ստանձնել ցանկացողներին առաջարկում է մինչև այս տարվայ մայիսի 1-ը խնդրագրերի հետ միասին ներկայացնել իրանց curriculum vitae-ն

Տեսչական ռոճիկն է տարեկան 1800 րուբլի
Սահմանված դասագինն է 60 րուբլի

§ 30 Կանոնադրութեան.—Տեսուչն ընտրի յուսումնական եկեղեցականաց՝ աւարտելոց զընթացս ուսմանցն ի Ճեմարանի Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի և կամ յայլ բարձրագոյն ուսումնարանս: Զպաշտօն տեսչի կարէ վարել և աշխարհական, նոյնպէս աւարտեալ զուսումն ի բարձրագոյն ուսումնարանս տէրութեան:

§ 31 Կանոնադրութեան.—Տեսուչն պարտաւոր է ուսուցանել զմի միայն ի նշանաւոր առարկայից ուսուցչական ռոճկաւ, և այն սակաւ քանակութեամբ դասուց:

§ 36 Կանոնադրութեան.—Տեսուչն բնակի ի դպրանոցին, իսկ եթէ անհնարին իցէ այս՝ արտաքոյ նորա, և յայնժամ ստանայ նա վարձադրամս վասն բնակարանի և գլառելիս, ըստ որոշման հոգաբարձութեան:

§ 42 Կանոնադրութեան.—Տեսուչն չկարէ զայլ որ և է պաշտօն արտաքոյ դպրանոցին:

Մանրամասն տեղեկութիւնների մասին դիմել Հոգաբարձութեանս խորհրդարանի անունով (Нахичевань на Дону, Попечтелный совѣтъ духовной Семинаріи) կ. 2—4

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Եւլիզավետինսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻՔԱՅԷԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլէքտրօբուժութիւն:
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ս. Ա. ԼԻՒՐԻ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ.—1—2 ժ. վիրաբուժական հ.:
Գ. Ա. ԲԷԲԷՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.:
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն:

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրների ընտրողութիւն:

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին օժէրներից:

առ. ե. հ. կ. 32—100

V-ՐԴ ԴԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ազատութեան դրօշակիր Վարդանին Ղեւոնդ երէցը օրհնում է:

Գատմական այս պատկերը մեծադիր՝ 70×51 սանտ. վաճառվում է երկուշաբթի, մարտի 5-ից սկսած դարձեալ իր իսկական գնով, այն է՝ հատը 1 ր. 50 կ.:

Հայ պարբերական թերթերի բոլոր բաժանորդներին, միայն ներկայ մարտ ամսվայ ընթացքում, եթէ նրանք իրանց պատուէրների հետ ուղարկեն և տպագրված հասցէն, այդ պատկերի հետ կուղարկվի նրանց «ԱՂԲԻՒՐԻ» և «ՏԵՂԱՓՆՁԻԿ»-ի առաջին №№-ը ձրի:

Շարունակվում է

ԱՂԲԻՒՐԻ, ՏԵՂԱՓՆՁԻԿԻ

Բաժանորդագրութիւնը. անակնկալ յաւելուածներով պրէմիաներով, յոբելեանական Աբով Ալմանախով. տարին 5 ր. Արտասահման 10 ր.:

Վերադիր վճարով պատուէրները թողված են առանց ուշադրութեան

Հասցէն՝ Тифлисъ, редакція «Агбюръ»

առ. 5—5

Թիֆլիսի Կայսերական երաժշտական դպրոցի կոնցերտային դահլիճում

Երեքշաբթի, մարտի 13-ին

ԿՈՆՑԵՐՏ

Յայտնի ջութակահար

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ

մասնակցութեամբ պիանիստ

Վ. Վ. ՊՕԿՐՕՎՍԿՈՒ

Տոմսակները 5 ր. 10 կ. մինչև 50 կ. ծախվում են Ի. Ա. Սուդանաջեանի երաժշ. մագազինում, իսկ կոնցերտի օրը երեկոյեան ժամը 6-ից սկսած դահլիճի մուտքի առաջ:

Սկիզբը երեկոյեան ճիշտ 8½ ժամին:

(կ. ե.) 1—2

ՄԱՐԻԿ

ԵՐԿՐԱՅԻՆ ՄԵՐ

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

(կ. ե. կ.) 1—3

Թիֆլիսի Ժողովարան

Ներկայ մարտի 13-ից ամեն երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը նշանակված են ընտանեկան երեկոյթներ:

առ. (11, 13, 17,) 1—3

Թիֆլիսի Ժողովարան

Ուրբաթ, մարտի 16-ին 1907 թ. նշանակված է պ. պ. անդամների ընդհանուր ժողով քուէարկելու աւագների թեկնածուների և վերաստուգող յանձնաժողովի անդամների պակասթիւը:

առ. (11, 16,) 1—2

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՄԱՍՆԱԳԷՏ

սիֆիլիս, միզային, վեներական եւ մորթու հիւանդութիւնների:

Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.:
Սօլօլակ, Բեհբութեան փող. № 33:

(ա. օ.) առ. 15—100

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրիմացութեան ելքը. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Պետերբուրգից. Պետական Դումա. Մամուլ. Դեկլարացիան. Ջութակահար Յ. Նալբանդեան. Ժողովրդական շարժումները Պարսկաստանում. Գիւղական ցաւերից. Գարունը ուշանում է. Նուխու դպրոցների մասին. Նամակ Սամարկանդից. Մի ոճրագործութիւն. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵԼՔԸ

I

Յեղափոխական գործողների հետ զուգընթաց հանդէս եկան թէ մեր երկրում և թէ պետութեան միւս մասերում մի շարք անձնական հաշիւներ առաջ տանող մարդիկ, զանազան չարագործներ, որոնք, ծածկելով յեղափոխականների դիմակներ, սկսեցին պարապվել կողոպուտներով և սպանութիւններով:

Այդպիսի անձնաւորութիւնների երեւան գալը, անկասկած, կարող էր վարկաբեկ անել կուսակցական գործողների անունները: Եւ ահա մենք տեսնում ենք ներկայումս, որ Ռուսաստանի զանազան կողմերում յեղափոխական կազմակերպութիւնները թռուցիկներով յայտարարում են, որ նրանք անխառն են այս ու այն չարագործութեան մէջ և բողոքում են յեղափոխական անունը արատաւորողների դէմ:

Կողոպտիչների կամ էքսպրօպրիատօրների գործողութիւնները գայթոյթ էին առաջ բերել հասարակութեան մէջ, որը միևնոյն ժամանակ չը գիտէր թէ որտեղ է վերջանում յեղափոխական կազմակերպութիւնը և որտեղ սկսվում աւազակութիւնը:

II

Մի երկու շաբաթ սրանից առաջ Թիֆլիսում անարխիստները բաց էին թողել թռուցիկներ, որոնցով զգուշացնում էին հասարակութեանը, թէ անարխիստական դիմակով շահախնդիր մարդիկ սպառնալիքներով դիմում են այս ու այն անձին կամ յարձակվում քաղաքացիների վրա փող կորզելու նպատակով: Անարխիստները բացէ ի բաց հրաժարվում էին աւազակային գործողների հետ որևէ առնչութիւն ունենալուց:

Այդ տեսակ յայտարարութիւնները անշուշտ զսպող ազդեցութիւն են գործում այն խմբերի վրա, որոնք մինչև այդ ազատ գործում էին՝ հովանաւորված յեղափոխական դիմակով:

Կեանքի երևոյթները ցոյց տուին, որ էքսպրօպրիատօրների յանդուգն գործողութիւնները սպառնում էին տարածվել իբրև այնպիսի մի չարիք, որ ունի իր ոգեւորված հետևողներին: Նա կրում էր նաև մի տեսակ հոգեկան ախտի կամ պսիխօզի կնիք իր վրա, որի շնորհիւ մարդիկ ոչինչ էին համարում իրանց կեանքը յանդուգն մի արարք աչքի ընկնելու համար:

III

Հասարակութիւնը, որ յեղափոխութեան միջոցին լուռ հանդիսատես էր շատ ու շատ եղելութիւնների և տանում էր զանազան տեսակ զրկանքներ, սպասելով վերջնական բարիքների, սկսեց կորցնել իր համբերութիւնը և փորձեր արեց միջամտելու մի քանի դէպքերում:

Այդ տեսակ միջամտութեան մասին մեզ տուին տեղեկութիւններ լրագիրները Ռուսաստանի միջին նահանգներից: Նոյն տեսակ փորձեր տեղի ունեցան Թիֆլիսում և Բաքւում: Հասարակութեան միջից գտնվեցին կամաւորներ, որոնք ձեռնարկեցին դիմադրական գործողութիւնների զանազան տեսակ յարձակվողների դէմ:

Այստեղ սակայն առաջ եկան նոր թիւրիմացութիւններ, որովհետև գործող խմբերի վէջ դժուար էր տարբերել յեղափոխական տարրերը շահախնդիրների տարրերից: Այդ թիւրիմացութիւնը շարունակվում է և ներկայումս:

Բայց մի բան պարզ է, որ հասարակութիւնը ինքը չէ ուզում թիւրիմացութիւնների մէջ մնալ և աւելորդ զոհեր ու զրկանքներ ունենալ:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Փետրվարի 17-ին Թիֆլիսի կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի նախագահ Գարեգին արքեպիսկոպոսը հեռագրով դիմել էր Պետերբուրգ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրին, խնդրելով թոյլատրել, որպէսզի երկաթուղու վարչութիւնը հերթից դուրս փոխադրէ Երևանեան և Գանձակի նահանգի ազգաբնակութեան համար Արմաւիրից գնած ցորենը: Այժմ Թիֆլիսի առաջնորդը ստացել է հետևեալ հեռագրական պատասխանը.

Պետերբուրգ, 9 մարտի

Ձեր 17/2 № 8026 հեռագրի համաձայն կարգադրված է № 2503-ով հերթական կարգից դուրս փոխադրել Գանձակի և Նահանգի ազգաբնակութեան համար գնված հացահատիկները:

Բաժանմունքի կառավարիչ՝ Շարոնեվիչ

Գանձակ, 7 մարտի

Գաւառս սանիտարական կողմից միանգամայն անտարբերութեան է մատնված. երեխայութիւն և ինքնախաբէութիւն է կարծել, որ լայնածաւալ Գանձակի գաւառի բազմաթիւ կարիքներին կարող է բաւարարութիւն տալ Դալլեար կայարանում ապրող գաւառական միակ բժիշկը իր երկու ֆելշերներով. առնուազն խայտառակ ինքնախաբէութիւն կը լինի: Չենք խօսում հեռու կամ մօտ գաւառական գիւղերի մասին, բաւական է յիշել, որ Գանձակի քթի տակ գտնվող գերմանական Ելենենդորֆ աւանում բաւական ժամանակ է սկարլատինը զոհեր է տանում մանուկներից, բայց այսօր պատահմամբ մի եկւոր հայից ենք իմանում այդ լուրը: Եթէ կուլտուրական գերմանական աւանը այդ վիճակումն է գտնվում, ապա ինչ վիճակի մէջ կը լինեն բազմաթիւ խուլ անկիւններում գտնվող հայ և թուրք գիւղերը: Հայոց թաղում բարեկենդանի երեկոյեան աւանդական սովորութեամբ, հրացաններ կրակելու պատճառով, ինչպէս լսեցինք, գեն.-նահանգապետը 300 ր. տուգանել է հայերին: Երէկ երեկոյեան, թուրքաց բայրամի օրը, թուրքաց մասում մօտ մի ժամ շարունակ հատհատ համարյա հրացանաձգութիւն կար. այդ վայրենի կրակոցը մեզ յիշեցրեց պատմական նոյեմբերի 23 ի գիշերը... Եթէ հաւատանք լուրերին, իբր թէ թուրքերը իրաւունք են ստացել նախօրօք:

Ոստիկանապետը այսօր հայոց թաղի ամեն մի փողոցից երկու մարդ հրաւիրելով իր մօտ՝ յայտարարեց գեներալ-նահանգապետի հետևեալ հրամանը: Այսուհետև շատ խստիւ արգելվում է հրացանաձգութիւնը: Այն թաղում, ուր կը խախտեն այս կարգադրութիւնը, թաղեցիք պատրաստ են տալ խաղաղութիւնը խանգարողին—հրացան կրակողին, հակառակ դէպքում կը գրաւեն այն անձանց զէնքերը, որոնք օրինապահանջ կարգով զէնք կրելու արտօնութիւն ունեն: Երէկ ամբողջ գիշերը շարունակվում էր թուրքաց թաղում հրացանաձգութիւնը, թէև ցերեկվայ ժամի երկուսից թուրքերին յայտարարված է եղել արգելումը:

Հրացանաձգութեան համար թուրքերին մի հազար րուբլի տուգանքի են ենթարկել, իսկ հայոց թաղի վրայի տուգանքը վերացված է, ի նկատի ունենալով, որ հայերին չեն նախազգուշացրել նախօրօք այդ մասին. չը գիտենք երբ իցէ խելքի են գալու այն խուլիգանները, որոնք իրանց արարմունքով բացի հասարակաց հանգստութիւնը խանգարելուց՝ նիւթական վնաս էլ են հասցնում...

Սագան

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

Մարտի 2-ին

Մօտեցայ Պետական Դումային, նկատեցի մի ինչ որ արտասովոր շարժում: Դրսում կանգնած են ահագին քանակութեամբ մարդիկ զանազան անցքերի առաջ. ոմանք ցանկանում են անցնել դահլիճը, ոմանք վերնայարկը և դրանց բոլորին մի պատասխան են տալիս, որ հրամայված է ոչ ոքի ներս չը թողնել:

Սկզբում ես այդ բացատրեցի նրանով, որ այսօր պիտի Ստոլիպինը իր դեկլարացիան կարդար, այդ պատճառով հրամայված է հասարակութեան չը թողնել վերնայարկը: Շտապում եմ ներս մտնել Դուման, բայց այդտեղ էլ նոյն լարված դրութիւնը, նոյն աշխոյժութիւնը: Ամենից առաջ աչքի է ընկնում այն հանգամանքը, որ այսօր պօստատան առաջ խռնված է մեծ բազմութիւն և բոլորն էլ հեռագիրներով: Շտապում եմ դէպի նիստի դահլիճը... Արդէն ժամը 11-ն է, պատգամաւորները պիտի իրանց տեղերումը լինէին, նիստը պիտի սկսված լինէր, դրա փոխարէն Եկատերինեան դահլիճում խռնված են բոլոր պատգամաւորները խումբ-խումբ և տաք վիճաբանում են: Այդ աղմուկի և իրարանցման մէջ կարողանում եմ պարզել, որ այսօր պատահել է մի անհաւելի դէպք—թափվել է նիստի դահլիճի առաստաղը:

Սարսափելի պատկեր. առաստաղը քանդվել է քառանկիւնի ձևով, ինչպէս յետոյ պարզվեց, 90 քառ. սաժէնից վայր է ընկել 14 արշին երկարութեամբ և 6 արշին լայնութեամբ մի զանգուած, մօտաւորապէս 2000 պուդ ծանրութեամբ: Այդպիսով ամեն մի պատգամաւորի գլխին կընկնէր մօտ 5 պուդ ծանրութիւն և այն էլ այնպիսի բարձրութիւնից՝ թողնելով իր տակը ամբողջ դահլիճի 7,8 մասը: Ահագին մասսիւ ջահերը այնպէս են ջարդվել և տափակել, որ կարծես թէ թիթեղից են շինված եղել. ուրեմն ինչ կը լինէր պատգամաւորների դրութիւնը, դժուար չէ ենթադրել:

Դէպքի ականատես եղել է մի ծառայող, որը քնում է եղել նախագահի տրիբունայի ետևում: 5 ժ. 40 րօպէին նա լսում է ինչ որ շառաչիւն և հազիւ է կարողանում աչքը բարձրացնել, որ տեսնէ թէ ինչ ձայն է, երբ առաստաղը վայր է ընկնում սարսափելի դղրդիւնով և ջարդում, փշացնում է բոլորը: Այնպէս, որ եթէ այս դէպքը պատահած լինէր 6 ժամ ուշ, ոչ մի պատգամաւոր չէր կարող ազատվել, այնպիսի թափով վայր է ընկել շտուկատուրան:

Ի հարկէ, առաջին հարցը, որ յղանում է մարդու գլխում, այն է, գտնել դէպքի մեղաւորին, բացատրել պատճառները: Այդ հարցի վերաբերեալ տիրում են զանազան կարծիքներ. գիւղացի պատգամաւորները և աշխատաւոր, բանւոր պատգամաւորները ուրիշ կերպ չեն կարողանում բացատրել այդ դէպքը, այլ միայն նրանով, որ սա սարքովի, ինչ որ «մութ գործ» է, որ կառավարութեան կամ սև-հարիւրեակային կուսակցութեան պատրաստած գործ է, և այդ մտքով էլ հեռագիրներ են ուղարկում հայրենիք, իրանց ընտրողներին, որ «առաստաղը քանդվել է, մութ գործ է»: Մի ուրիշ տեղ հաւաքված են մի խումբ պատգամաւորներ. նրանցից մէկը, Ուրալից է, պատմում է, որ ինքը 20—25 տարի երկաթի առուտուրով է պարապում և գիտէ թէ ինչ մեխ քանի տարվայ է: Ձեռքին ունի ահագին քանակութեամբ մեխեր և գալիս է այն եզրակացութեան, որ փոքր ի շատէ մեծ և հաստ մեխերը պատկանում են հին ժամանակին (սրանից տասը տարի առաջ եղել է Տաւրիկեան պալատի առաջին րեմօնտը), իսկ աւելի բարակ և փոքր մեխերը պատկանում են նոր-անցեալ կամ այս տարվայ րեմօնտին: Եւ իսկապէս այդ մեխերը, փտած տախտակները դիտելիս, մարդ զարմանում է, որ այդ առաստաղը այսքան ժամանակ դիմացել է:

Թէ հին և թէ նոր մեխերը 3 դիւյմից աւելի երկար չեն. հին րեմօնտի ժամանակ խրփածները գերանների մէջ մտած են եղել մի դիւյմ, իսկ վերջին րեմօնտինը միմիայն կէս կամ քառորդ դիւյմ է մտած եղել գերանի մէջ. այդտեղից պարզ է, որ ծեփը—շտուկատուրկան եթէ այսքան ժամանակ դիմացել է, այդ նրանից է, որ կիրը, ալեբաստրը և այն խառնուրդներն են, որ պահում են եղել առաստաղը:

Նոյն պատկերն է ներկայանում, երբ քննում էք տախտակները: Երևակայել անգամ անկարելի է, որ 90 քառակուսի սաժէն առաստաղի համար գործ ածվի ¼ դիւյմանոց տախտակներ, այն էլ կիսափտած, իսկ մի քանի տեղերում բոլորովին փտած: Մի պատգամաւոր մօտեցաւ իր տեղին և սարսափած բացականչեց. «Եթէ ես նստած լինէի տեղումս, ինձնից միայն թաց տեղ կը մնար»: Վերցրեց մի կտոր տախտակից, մատերի մէջ փշրի դարձրեց և ասաց. «Ես ոչ թէ տուն, այլ և հաւաբուն շինելիս աւելի հաստ տախտակներ եմ վերցնում, քան սրանք են»:

Մի ուրիշ խումբ պատգամաւորների արդէն հաշտվել է պատահած դժբախտութեան հետ և աշխատում է պատճառները գտնել, թէ ինչից է առաջացել այսօրվայ դէպքը, ինչու այսօր է կոտրվել, այլ ոչ թէ երէկ կամ վաղը: Ոմանք ասում են, որ այսօր այնտեղ կըտուրը տարել են մեծ թւով զինւորներ, որպէս զի Ստոլիպինի հետ եթէ մի բան պատահի, արդէն պատրաստ լինեն. ոմանք ասում են, որ վերջին ժամանակներս կտուրով ջրի խողովակներ են անցկացնում եղել և այն մի շարք այսպիսի գործեր և որ օճորքը այդ շարժումներից ճաքել է և վայր ընկել: Մի բան պարզ է, որ վերջին ժամանակներս առաստաղը մի փոքր թեքված է եղել, կառավարութեան արխիտեկտօրները այդ բանը իմանում են եղել, բայց ուշադրութիւն չեն դարձրել:

Դէպքից յետոյ իսկոյն հաւաքվում են Դումայի նախագահը, ամբողջ պրեզիդիումը և վճռում են նիստը ունենալ Տաւրիկեան պալատի միւս դահլիճներից մէկում: Իսկոյն հաւաքում են ամեն տեղից աթոռներ, շինում են ամբիոն ճառախօսների համար, երեք սեղան նախագահի և պրեզիդիումի համար և արդէն հնարաւոր է լինում նիստը սկսել: Ընթերցողներին արդէն յայտնի են նիստի մանրամասնութիւնները:

Նիստը փակելուց յետոյ նախագահը Ստոլիպինի և միւս մինիստրների հետ գնացին դէպքի տեղը. Ստոլիպինը այնքան հանգիստ և ծանր էր քայլում, որ կարծես թէ ոչինչ չէ պատահել. ասենք զարմանալի էլ չէ. այն մարդը, որը հրատարակել է դաշտային-զինւորական դատարանները, որով ամեն օր ահագին քանակութեամբ երիտասարդներ գլխատվում կամ համազարկով սպանվում են, զուցէ ոչինչ չը զգար և նոյնպէս հանգիստ կերպով գնար դէպքի տեղը և այն ժամանակ, երբ փլատակների տակ մնացած լինէին և պատգամաւորները: Ասում են, որ Ստոլիպինը Գոլովինին ասել է. «Այսպիսի յաղթութիւն ձախակողմեան կուսակցութիւնները կառավարութիւնից չէին կարող սպասել և ձախակողմեանների համար այս դէպքը մի մեծ կոզր է իրանց պրօպագանդայի համար»:

Արդէն այդ ժամանակ հաւաքվել էին պրօկուրօրը, կառավարութեան ճարտարապետները և այն կօմիսիան, որը ընդունել էր այս տարի րեմօնտի գործերը. դրանց միացան Դումայի նախագահը, ամբողջ պրեզիդիումը և պատգամաւորներից ընտրված ճարտարապետներ և մօտ 50 հոգի ու սկսեցին դէպքի քննութիւնը:

Ամենաառաջին հարցը այն էր, թէ արդեօք մնացած գերանները և միւս դահլիճների և սենեակների պատերը ամուր են, թէ նրանք էլ վտանգ են սպառնում: Այս հարցը պէտք էր նախ և առաջ վճռել այն պատճառով, որ կարելի լինէր յայտնի որոշման գալ, թէ Դումայի նիստերը շարունակէլ այստեղ, Տաւրիկեան պալատում, թէ փնտռել մի ուրիշ աւելի յարմար շինութիւն: Այդ հարցի վերաբերեալ այսօր երեկոյեան ժողով է լինելու և վերջնական որոշումը նրանից է կախված. բայց արդէն պարզված է այսքանը, որ կօմիսիան և պրեզիդիումը հնարաւոր են գտել Դումայի նիստերը շարունակել Տաւրիկեան պալատում: Դրա համար հարկաւոր է մնացած շտուկատուրան էլ քանդել հեռացնել, առաստաղը բրեզենտով ծածկել, իսկ միւս դահլիճներում նոյնը անել, եթէ պարզվի, որ այնտեղ էլ վտանգ կայ: Մինչև անգամ որոշ կերպով ասում էին, որ հետևեալ նիստը կայանալու է չորեքշաբթի օրը, ամսիս 7-ին:

Երկար խօսակցութեան և վիճաբանութեան առարկայ էր այն հարցը, թէ արդեօք ուր տեղափոխել Դումայի նիստերը այն դէպքում, եթէ պարզվի, որ Տաւրիկեան պալատում այլ ևս անկարելի է նիստեր ունենալ: Անուանում էին մի քանի շինութիւններ, օրինակ Դվօրեանսկոյէ սօբրանիէ, Մարիինսկի թատրօնը, Ժողովրդական տունը և Տէնիշէվսկի ուսումնարանը: Դվօրեանսկոյէ սօբրանիէն ինչպէս յայտնի է նիստեր է ունենում Պետական Խորհուրդը, բայց այդ ոչինչ, կարելի էր կարգադրել, որ Խորհրդի նիստերը տեղափոխվէին Մարիինսկի պալատը, իսկ Դումայի նիստերը կայանային այնտեղ. բայց Դվօրեանսկոյէ սօբրանիէն գտնում էին անյարմար թէ իր փոքրութեամբ և թէ նրանով, որ քիչ սենեակներ կան զանազան կօմիսիաների ֆրակցիաների համար:

Ինչպէս վերևը յիշեցի, առաստաղի միայն միջին մասն է վայր ընկել, բայց ծեփը չէ ընկել դահլիճի մէջտեղին, այլ առաստաղի միջից բաժանվել է երկու մասի և ընկել է դէպի աջ և ձախ: Աւելի մեծ կտորը ընկել է դէպի ձախ և համեմատաբար աւելի փոքր մասը դէպի աջ, այդպիսով ստացվել է հետևեալ պատկերը. որ բոլոր այն տեղերը, որտեղ նստած էին սօցիալ-դեմօկրատները, սօցիալիստ - յեղափոխականները, աշխատաւոր խումբը, ժողովրդական սօցիալիստները, մուսուլմանական, կօզակների խմբերը, լեհական կօլօն և մի մասը հոկտեմբերեանների տեղն ու տեղը կը ջարդվէին, իսկ ժողովրդական ազատութեան կուսակցութեան պատգամաւորները փշրանքներից և ջարդերից կը փչանային։ Այժմս անփյաս մնացել են աջակողմեանների 64 նստարանները և ձախակողմեանների 41 նստարանները։ Շտուկատուրկայի մի չընչին մասը ընկել է և վերնայարկը ձախ կողմից, այնպէս որ զուցէ ժուրնալիստներից միասվորներ լինէին։ Նախագահի տեղը—տրիբունան և առհասարակ այդ գծի վրա գտնվող բոլոր տեղերը, օրինակ՝ Նախագահի տեղից դէպի աջ մինիստրների լօժան և արտասահմանեան և պօլիցիական մամուլի լօժաները և ձախ կողմից մամուլի և ստենօգրաֆիստների ու հեռագրական գործակալութեան լօժաները մնացել են անփյաս։

Թէև այս օրը այնքան բաղդաւոր է անցել, որ ոչ մի մարդկային զոհ չէ եղել, բայց փաստը մնում է փաստ, որ, մինչև որ երկրի կառավարութիւնը բիւրօկրատիայի ձեռքին է, երկիրը քանի գնայ կը փչանայ, կաղքատանայ և կոչնչանայ։

Այսօրվայ պատկերը ոչ ոքի չը պիտի զարմացնէ կամ ապշեցնէ. այս նոյն բանն էր կըրկնվում, ինչ բիւրօկրատիական այն հսկայ պատերազմը, որով բացի նրանից, որ կորցրեց 400,000 մատաղ հոգիներ, Ռուսաստանը կորցրեց իր նշանակութիւնը իբրև հզօր պետութիւն։ Բիւրօկրատիան ձեռնարկեց ժողովրդին հաց մատակարարելու գործը, երկիրը ընկաւ սովի և հիւանդութիւնների մէջ։ Բիւրօկրատիան ձեռնարկեց իր ֆինանսական արշաւանքները, Ռուսաստանը սնանկութեան հասաւ, և այլն և այլն ձեռնարկութիւններ, և այժմս էլ արդէն «ժողովրդի ներկայացուցիչների գլխին թափվում են բիւրօկրատիայի կառուցած պատերը»... Այս բոլորից կարելի է միմիայն մի եզրակացութիւն անել, որ քանի ժողովուրդը ինքը չէ վերցրել իր ձեռքը երկրի կառավարութիւնը, այլ կը թողնէ բիւրօկրատիային կեղեքել և հարստահարել նրան, այս տեսակ դէպքեր և դեռ աւելի անախորժները տեղի կունենան։

Արսէն Բալանթար

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Նիստը բացվում է ժամը 11 և 10 րոպէին։ Նախագահում է Գոլովինը։ Նա յայտնում է Դումային, որ բաժինները ներկայացրել են Պէնզայի և Տօբոլի նահանգների կողմից ընտրված պատգամաւորների լիազօրութիւնները ստուգելու հետևանքները, ինչպէս և զեկուցել են Կալուգայի նահանգի ընտրութիւնների անկանօնութեան մասին։ Բացի դրանից հերթական յայտարարութիւն կայ 82 անդամների ստորագրութեամբ Պէրմի նահանգի պատգամաւոր Սրգօվին ծեծելու և նրա վրա ոստիկանութեան գործադրած բռնութեան մասին, որոնք հաստատվել են արձանագրութիւններով և բժշկական հետազօտութեամբ, և 87 պատգամաւորների տուած յայտագիրը ամնիստիայի մասին։

Նախագահը առաջարկում է Կալուգայի ապօրէն ընտրութիւնների զեկուցագիրը քննել երեք օրից ոչ ուշ, իսկ Պէնզայի և Տօբոլի վերաբերողները—հետևեալ նիստում։ Ապա առաջարկում է կատարել ֆինանսական, նախահաշուի, ելմտային և խմբագրական ու գրադարանային մասնաժողովների ընտրութիւնները։ Առաջին երեքը բաղկանալու են 33-ական, իսկ վերջին երկուսը 7-ական անդամներից։

Հաշւում են թերթիկները։ Նիստը շարունակվում է իր կարգով։

Նախագահը զեկուցանում է 44 անդամների ստորագրութեամբ ներկայացրած յայտարարութիւնը՝ պատերազմա-դաշտային դատարաններին վերաբերող օգոստոսի 19-ի օրէնքը վերացնելու մասին։

Դուման անցնում է սովեալներին օգնութիւն հասցնելու առաջարկի քննութեան։

Առաջինը հանդէս է գալիս Ռօդիչև, որը ըստ էութեան պաշտպանում է նախընթաց նիստում արած իր առաջարկութիւնը։

«Այստեղ ասացին, որ մասնաժողովները իրանց ձեռքն առնեն գործադիր իշխանութիւնը։ Ըստ էութեան դա Դուման չէ կարող իրագործել։ Ճանապարհները պատուարված են, խճճված ամբողջովին. այդ պայմաններում իշխանութիւնների լիակատար աջակցութեամբ հանդերձ նոր կազմակերպութիւնը անկարող է մի բան անել։ Դուման նշաւակ կը լինի իր սխալների համար, Դումայի հեղինակութիւնը կը վտանգվի։ Գործադիր ֆունկցիաները Դումային յանձնելու նախագիծը մերժել։ Միւս առաջարկը—կօնտրօլ սահմանել տեղերում, նոյնպէս անիրագործելի է. քննութիւնը կը ձգձգվի, սովեալների գործը կը վերջանայ աշնան մօտերը, երբ քաղցը կը վերջանայ։ Ինչպէս առաջ կարծում եմ, որ այդօրինակ թափառական դերասանները գաւառները ուղարկելը յամենայն դէպս պետական գործ չէ, այլ սոսկ մի ցոյց։ Նախագծվող մասնաժողովին նոյնպէս պէտք չէ յանձնել օրէնսդրական աշխատանք, ինչպէս և մատակարարական հարցերի քննութեան պարտականութիւնը։ Մասնաժողովը չէ կարող քննել և գործաւորներին օգնութիւն հասցնելու հարցը։ Այդ հարցը առ այժմ դուրս պէտք է թողնել»։

Հռետորը մացնում է իր առաջարկը, որ արդէն հաղորդված է. — կազմել 22 հոգուց բաղկացած մի մասնաժողով բաժիններից, ընտրութեան եղանակով։ «Կանգ առնելով անկուսակցականութեան հայեցակէտի վրա, չէ կարելի մերժել զանազան կուսակցութիւններին—մասնակցել մասնաժողովին»։ Վերջում հռետորը մեծ պաթոսով կարդում է ստենօգրաֆով տպած, յունիսի 12-ին առաջին Դումայում Ստոլիպինի յայտարարութիւնը՝ թէ մինիստրութիւնը իր բոլոր ույժերով և միջոցներով կօգնէ սովյալուկ ազգաբնակութեան. «Կատարվե՞լ է, արդեօք, այդ խոստումը, պարոնայք։ (Ձայներ. ոչ, ոչ. Պուրիշկևիչ կատարեց)։ Դէպի մեզ այս ամբիոնից ուղղված են դեկլարացիայում եղած նոյն խօսքերը։ Կիրագործվե՞ն դրանք—դա ցոյց կը տայ ապագան։ Մինչ այժմ ոչ մի անգամ այդ չէ կատարվել։ (Կենտրոնը և ձախակողմեանների մի մասը ծափահարում են)։

Ռօդիչևի ճառի ժամանակ մինիստրական օթեակում երևում են Ստոլիպինը, Կոկօվցեվը, Վասիլչիկօվը, Ֆիլոսոֆովը, Շչէգլովիտօվը, Շվանէնբախը, Սինօդի օբէր-պրոկուրոր Իզվոլսկին, Գերբէլը։

Պատգամաւոր Ալէքսինսկին առաջարկում է տպագրել, բաժանել Ռօդիչևի առաջարկը և քննել նրան հետևեալ նիստում։

Ռօդիչևը առարկում է։

Նախագահը կարծիք է յայտնում, որ Ռօդիչևի առաջարկութիւնը կրճատված ձևով է ներկայացվել նախկին նիստում, ուստի հարկ չը կայ նորից բաժանել։

Ջափարիձէ առաջարկում է Ռօդիչևի առաջարկի դէմ՝ թէ պէտք է առանձնացնել գործաւորների հարցը։ Միևնոյն է, գիւղացին է քաղցած թէ բանւորը, անհրաժեշտ է հարցը քննել ամբողջովին։

Գործաւոր բանւորների հարցը բաժանելու դէմ առարկում են 132 ձախակողմեաններ։ Երկրորդ քուէարկութեան ժամանակ ոտքի է կանգնում մեծամասնութիւնը։

Ծերեթելին խնդրում է չը հաշւել, նկատելով գործաւորների հարցը բաժանելու նկատմամբ եղած ձայների մեծամասնութիւնը։

Բասկինը առարկում է Ռօդիչևին և մացնում է մի խումբ անձանց առաջարկութիւնը՝ գործը յանձնել ժողովրդից—քառանդամ ֆօրմուլով ընտրված ներկայացուցիչներին։

Նախագահը առաջարկում է այդ յայտարարութիւնը յանձնել այն մասնաժողովին, որը կընտրվի։ Դուման համաձայնվում է։

Կուզմին-Կարավաեվը մատնանշում է, որ պէտք է ըմբռնել գիւղացիութեան գրութիւնը, որը ակամայ հազարաւոր տարիներ շարունակվում է և տանջվում։ Ռուսաստանը սովում է համարեա ամբողջովին, համատարած կերպով։ Հարկաւոր միջոցները որոշելու համար անհրաժեշտ է նախ որոշել սովի չափերը, օրինագիծ կազմելը և կօնտրօլը յանձնարարել մասնաժողովին (թոյլ ծափահարութիւններ)։

Դոլգորուկով չէ հաշտվում գործը կառավարութեան յանձնելու մտքի հետ, կառավարութեան, որը հետամուտ է սոսկ քաղաքական նպատակների, և կամ զեմստվոյի ձեռքը, որը բաղկացած է կալուածատէր դասակարգի ներկայացուցիչներից։

Սօցիալ-յեղափոխականների մի խմբակ առաջարկութիւն է անում կազմել 33 հոգուց բաղկացած մասնաժողով, յանձնարարել նրան մշակել ելմտացը, կազմակերպել ժողովրդական կօմիտէներ, մշտական մատակարար կօմիտէներ ժողովրդի մասնակցութեամբ, քննել կառավարութեան հաշիւները ամբողջ Դումայով և տեղերը երթալով։

Ջափարիձէ խօսում է տեղական կօմիտէներ հաստատելու դէմ, որոնք կը ջարդվեն իշխանութիւնների ընդդիմադիր ույժից։ Սօցիալ դեմօկրատները կողմնակից են այնպիսի մասնաժողովի, որի նպատակն է ստիպել ժողովրդին իր ձեռքը վերցնել գործը։ Հռետորը հակառակ է մասնաժողովը բաժիններով ընտրելու. սովը որոշ քաղաքականութեան հետևանք է, ուստի պէտք է պարզաբանվեն բոլոր կուսակցութիւնները։

Նախագահը յայտարարում է, որ գրվել են 26 հոգի, խօսել են 5-ը։ Ընդունվում է հռետորների ցուցակագիրը դադարեցնելու առաջարկը։ Մերժվում է խօսելու ժամանակը 5 րոպէով սահմանափակելու առաջարկը։

Ֆեօդորով առաջարկում է լրացնել Ռօդիչևի առաջարկը, որ օգնութիւնը տրվելու է ոչ միայն շինական, այլ և քաղաքի ազգաբնակութեան։

Ջափարիձէ կրկնելով իր ասածները, ասում է. «Սօցիալ-դեմօկրատները համոզված են, որ սովը կապիտալիստական կազմի հետևանքն է կազմում. նա կոչնչանայ սօցիալիստական կազմի մէջ. (մեծադղորդ ծափահարութիւններ աջակողմում*)։

Ալէքսինսկի.—Ցնորական է Ռօդիչևի առաջարկը. ֆանտաստիքական—սահմանադիր-ռամկավարների առաջարկութիւնը։ Այստեղ, Դումայում քննադատութիւններ անելով քաղցի հարցը չի լուծվի։ Չեմ զարմանում, որ կենտրոնը այդ հարցը քուէարկեց աջակողմեանների հետ։ Կենտրոնը, նախագահին և առհասարակ պրէզիդիումին ընտրելու ժամանակ ձայն տուեց մեզ հետ, ձախակողմեանների հետ միասին. իսկ ստամոքսի հարցերում նա ձայն է տալիս աջակողմեանների հետ։ Սրտառուչ, խանդաղական միութիւն։ Մի քանի օրից յետոյ ես չեմ զարմանայ, եթէ կենտրոնը ձայն տայ մեզ հետ անձի անձեռնմխելիութեան և այլ հարցերում։ Դուման ստեղծվեց շնորհիւ պրօլետարական մասսաների և գիւղացիութեան ստեղծած շարժման։ Կազմակերպութիւնը կուղարկէ իսկական պատգամաւորներ, ոչ այնպիսիներին, որոնք իբրև ճանապարհորդներ կը գիտեն գիւղացիների խրճիթները առաջին կարգի վագօնի պատուհաններից։ Աշխատեցէք կապ հաստատել ժողովրդի հետ ժողովրդի տնտեսական շահերի գործնական հողի վրա։ (Ձախակողմը ծափահարում է)։

Գէրուսը մատնանշում է, որ կառավարութիւնը ոչ միայն չէ ծախսել օգնութեան գործի համար յատկացրած գումարներից, այլ նոյն իսկ չէ թոյլատրել, որ օգնութիւնը ժողովրդին հասնէ»։ Մենք առաջարկում ենք կենդանի կօնտրօլ տեղերում, և ոչ թէ բամբակագործութիւն, ինչպէս առաջարկում է Ռօդիչևը» (թոյլ ծափահարութիւններ ձախակողմում)։

Իոսիֆ Հեսսէնը առարկելով սօց.-դեմօկրատներին, ասում է, որ նրան ճնշում է այն միտքը. թէ ինչպիսի տպաւորութիւն կը գործեն մեր խօսակցութիւնները սովեալների վրա։ Ծանր է խօսել լսելով այդ ճառերը։ Երկու ամբողջ օր Ալէքսինսկին խօսում է այստեղ ամենից քիչ սովի մասին. նա միայն իր հին հաշիւներն է մաքրում սահմ.-ռամկավար կուսակցութեան հետ։ Ալէքսինսկին շտապում է վերցնել իր վրայից արատը այն ժամանակից սկսած, երբ սօցիալ-դեմօկրատները ձայն են տալիս աջակողմեանների հետ։ Բաւական է, որ մասնաժողովը աշխատանքների ձեռնարկէ և կօնտրօլի համար իր մօտ հրաւիրէ ֆինանսների և ներքին գործերի մինիստրներին, գործը ինքն իրան կը լուծվի։ Եթէ ձախակողմեանները այդ հարցի նկատմամբ օրինագծի հիմնական կէտեր ունեն, թող ներկայացնեն։ Բայց այդպիսի կէտեր, հիմունքներ չը կան։ Անհրաժեշտ է նրանց ժողովել և մշակել։ «Հէնց որ պատգամաւորը երևում է ժողովրդին,—ասաց սօցիալ-դեմօկրատներից մէկը,—սկսվում է շարժում»։ Մի՞թէ կարելի բան է պատգամաւորներ ուղարկել ոչ թէ հաց բաժանելու, այլ ժողովուրդը գրգռելու համար»։ (Աջակողմեանները ծափահարում են. ձախակողմից լսվում է մի ձայն հռետորին. «Ձեզ ծափահարում են աջակողմեանները»)։ Հռետորը. «Ինձ համար կարևորը այն չէ, թէ ով է առհասարակ ծափահարում ինձ. ինձ համար կարևոր և թանգ են ժողովրդական գործը, ժողովրդական կարիքները» .. (Կենտրոնում, ինչպէս և հոկտեմբերեանները ծափահարում են)։

Կուզնեցով խնդրում է շուտով ազատել ժողովուրդը հանդչելուց. գտնում է, որ Ռօդիչևի նախագիծը չէ համապատասխանում ժողովրդական-իսկական կարիքին (սօցիալ-դեմօկրատները ծափահարում են)։

Հետևեալ հռետոր Ջէյնալովի ճառի ժամանակ դահլիճում սկսվում են շփոթ, խօսակցութիւններ, շատերը վեր են կենում տեղերից և հեռանում են, կենտրոնից և աջակողմեաններից շատերը լրագիրներ են կարդում։ Հռետորը շատ վատ է խօսում ռուսերէն։

Վասիւտին առաջարկում է վերջացնել խօսակցութիւնները և գործով զբաղվել։

Կիրիենկօ պաշտպանում է Ալէքսինսկուն։ Ալէքսինսկին բնաւ հաշիւներ չէ մաքրում սահմ.-ռամկավարների հետ, նրա հայեցակէտը միայն դուր չէ գալիս սահմ.-ռամկավարներին։ «Մեզ, սօցիալ-դեմօկրատներիս, ասում են. «կը վերցնէ՞ք արդեօք այն շարժման պատասխանատւութիւնը, որը կը ծագէ տեղերում, երբ գնանք այնտեղ»։—Այո, վերցնում ենք։ Անցեալ Դուման պատգամաւորներ ուղարկեց Բելոստոկ, նրանք պարզեցին, որ ջարդը կազմել էր կառավարութիւնը։ (Աջակողմը.—«սուտ է». ձախակողմը ծափահարում է)։ Մենք, սօցիալ-դեմօկրատներս, առաջին հերթին դնում ենք հասարակական ինքնագործունէութիւնը։ Հին կազմը նեխվել է, անհրաժեշտ է նրան փոխարինել»։

Պուրիշկևիչ.—Մեզ օրական ռոճիկ է տրվում 5000 րուբլի. նիստեր ենք գումարում 20 օր, դա կանէ 100,000 րուբլի, որով կարելի է կերակրել յամենայն դէպս մի գաւառ։ Առաջարկում եմ վերջացնել դատարկ վիճաբանութիւնները (աջակողմը ծափահարում է)։

Մինիստրների խորհրդի նախագահի ճառը. «Կառավարութիւնը կամենում է յայտնել թէ ինչպէս կարելի է հարցը դնել։ Նա կարծում է, որ Դումային վերաբերեալ կանոնների 5-րդ յօդուածի համաձայն Դուման, քննվելիք գործերի նախնական քննութեան համար, կարող է իր միջից բաժիններ և մասնաժողովներ կազմել։ 31, 32 և 33-րդ յօդուածները բացատրում են, որ գործերն են Դումային վերաբերվող։ Վերջապէս Պետական Դուման կարող է դիմել մինիստրներին հարցապնդումով։ Ներկայ դէպքում առաջարկված է կազմել մի մասնաժողով մատակարարական գործում կառավարութեան ցոյց տուած գործունէութեան հաշիւների։ Իսկապէս ասած, այդ հաշիւներից Դուման քննելու է միայն Պետական կօնտրօլի հաշիւները։ Ներկայ դէպքում այսօրվայ բոլոր ճառերը կրում են հարցապնդումների բնաւորութիւն՝ կառավարութեան անօրինակաչափ գործողութիւնների վերաբերութեամբ, ուստի այստեղ արած առաջարկները կառավարութիւնը հասկանում է իբրև մի հարցապնդում՝ ուղղված իրան։ Որովհետև շուտով, մօտ օրերս պէտք է հրատարակվեն մատակարարական և սերմացուի հաշիւները, ուստի կառավարութիւնը այդ հաշիւը Դումա կը մացնէ, իբրև պատասխան հարցապնդման։

Ապա, համաձայն Դումայի կանոնադրութեան 40-րդ յօդուածի, նա կարող է դիմել մինիստրներին և առանձին բաժինների կառավարիչներին այն բացատրութիւնների համար, որոնք ուղղակի կերպով կապ ունեն նրա քննելի գործերի հետ։ Ուրեմն, թէ մասնաժողովը հաշիւը քննելու ժամանակ կը դիմէ ներքին գործերի մինիստրին կամ մի ուրիշին՝ լրացուցիչ բացատրութիւններ ստանալու համար, այդպիսի բացատրութիւնները անմիջապէս կը ներկայացվեն Դումային։ Ապա կառավարութիւնը նկատի ունէր Դումային միջնորդել—լրացուցիչ գումար յատկացնել մատակարարական գործի համար։ Հետևաբար, այդ միջնորդութիւնը քննելու ժամանակ, Դուման կարող է դիմումն անել բացատրութիւններ ստանալու, որպիսիները կը տրվեն նրան։ Անկասկած է, որ 40-րդ յօդուածի կարգով կառավարութիւնը Դումային կը ներկայացնէ ամենամանրամասն բացատրութիւններ, որովհետև կառավարութեանը ցանկալի է լոյս սփռել այդ գործի վրա ըստ կարելւոյն համատարած կերպով, որի ապացոյց կարող են ծառայել կառավարութեան ցոյց տուած ջանքերը՝ Լիդվալի դժբախտ գործը լիակատար և ընդհանուր կերպով լուսաբանելու և պարզելու համար։ Ինչ վերաբերում է իսկապէս մատակարարական օրէնքին, կառավարութիւնը չէ ծածկում բնաւ գոյութիւն ունեցող օրէնքի պակասութիւնները և Պետական Դումայի հաստատութեան է ներկայացնում նոր ժամանակաւոր կանոններ։

Անցնելով այն յարձակումների էութեան, որպիսիները կառավարութիւնը լսեց այսօրվայ վիճաբանութիւնների ընթացքում, ես կարծում եմ, որ մասնաժողովը, որ այնպիսի կարևոր նշանակութիւն է ունենալու, միայն կառավարութիւնը ժողովրդի աչքում պարսաւելու և խայտառակելու զէնք չի ծառայի, ուստի կառավարութիւնը իր բացատրութիւնները կը յայտնէ ինչպէս մասնաժողովի էութեան, այնպէս և նրա՝ Դումային մատուցանելի աշխատանքները վերջանալու նկատմամբ։ Ի նկատի առնելով այդ ամենը, ես յայտնում եմ, որ կառավարութիւնը ամբողջովին և ամեն միջոցներով միանում է Ռօդիչևի առաջարկին»։ (Ստոլիպինը իջնում է ամբիոնից և գրաւում է իր տեղը մինիստրների աթոռներում—աջակողմեանների և կենտրոնի երկար չընդհատվող և բարեկամական ծափահարութիւնների տարափի տակ)։

Սաղարեթեան և Ստախանցևսկի պաշտպանում են տեղական մասնաժողովներ հաստատելու միտքը։ Գրվողներից—Սարուվէն, Ստախովիչը և ուրիշները հրաժարվում են խօսելուց։

Կիզեվետտերը առաջարկում է շուտով յանգել որոշ գործնական որոշման. «Ընտրենք հալից մասնաժողով, ինքը կեանքը ցոյց կը տայ նրա գործունէութեան ծաւալը։ Ռօդիչևի առաջարկը հարցին կենդանութիւն չէ տալիս, բայց ընդլայնում է նրան։ Մասնաժողովի հետ մենք կը խօսենք թւանշաններով, որոնցից այնպէս վախենում է բիւրօկրատիան» (կենտրոնը ծափահարում է)։

Եվլիխով.—Ժողովրդի գործը պէտք է կենտրոնանայ ժողովրդի ձեռքում։ Այստեղ գեղեցիկ և ճոխ ճառերից այն կողմը չես անցնում. գնանք այնտեղ, ժողովրդի մօտ, նրան օգնելու և նրա հետ միանալու համար։

Վոլկ-Կարաչևսկի պաշտպանում է սօցիալ-դեմօկրատների առաջարկութիւնը, մի քանի ուղղումներ է մացնում ժողովրդական-սօցիալիստների կողմից։

Տէր-Աւետիքեանցը մատնանշում է Անդրկովկասի սովը, որը առաւելապէս ընդարձակ չափեր ընդունեց հայ-թիւրքական ընդհարումներից յետոյ։ Սովը գլխաւորապէս մեծ է այնտեղ, ուր գործել են պատժիչ զօրախմբերը։

Ապա խօսում է Ժիգիլեվ, որը մատնանշելով, որ Պուրիշկևիչը խօսեց մեծ ռոճիկների մասին, հարցնում է՝ ինչ է ծախսում կառավարութիւնը ժանդարմների համար։

Ռօդիչև բարձրանալով ամբիոն, յայտնում է, որ պատասխանելու է այն բոլոր առարկութիւններին, որոնք տեղացին նրա վրա այստեղ։ «Ասում են, որ պէտք է ժողովրդի աչքը բանալ, շրջել տեղերը, կազմակերպել ազգաբնակութիւնը։ Ժողովուրդը այստեղ ուղարկել է իր աչքերը, որպէսզի նստեն այստեղ, ոչ թէ շրջեն տեղերում։ Կամենում են պատգամաւորներին տեղերը ուղարկել, ասել ժողովրդին ճշմարիտը, կերակրել քաղցածներին։ Այդ առիթով ես մի բան յիշեցի. «Գնա այնտեղ—չը գիտեմ ուր, վերցրու այդ—չը գիտեմ ինչ» (?)։ Աշխատաւոր խմբակը պահանջում է առաջարկս լրացնել, որ մասնաժողովին յանձնարարվի օրինագիծ մացնել Դումա։ Մացրէք նոր օրէնքի հիմնական կէտերը, իսկ մենք նրանց կը քննենք և մի մասնաժողով կը կազմենք՝ օրինագիծը մշակելու այդ որոշումների հիման վրա։ Ես այսօրվանից չեմ զբաղվում տեղական կօմիտէներ կազմելու խնդրով, բայց քննադատութիւններ անել այդ առանձին նախագծերի և տեղական զեմստվոյին բարենորոգումների մասին բոլորովին անօգուտ է. դա պճնազարդվել կը լինի ազգաբնակութեան առաջ։ Դէպի քաղցածները տածած զգացմունքները և պարտականութիւնները պէտք է թելադրեն նախ և առաջ տրամաբանութեան կանոնները։ Այստեղ պահանջներ եղան՝ մասնաժողովին յանձնարարել ամեն տեսակի հետազօտութիւն, սակայն հարկաւոր է ճշգրիտ և որոշակի ուրուագծել հարցը, քան հետազօտել։ Ձեռնարկելով մատակարարական մասնաժողովի կազմակերպման այնպէս, ինչպէս ես եմ հասկանում, մենք, ի հարկէ, քաղցը չենք սպառ, բայց կանենք այն, ինչ որ կարող ենք յիրաւի կատարել։ Մենք չենք կարող ստիպել, որ գետերը բացվեն, ինչի մասին որ այստեղ ծիծաղելով ասացին, բայց ինչ որ Դուման կարող է, նա պէտք է անէ։ Դա բնաւ այնքան քիչ բան չէ, ինչպէս շատերին պատկերանում էր։ Կարծում եմ, որ մենք ամենից առաջ գործին կը ձեռնարկենք, որը ներկայ րոպէին պարզ է այն շրջանակներում, որոնց մէջ նրան կարելի է իսկապէս սկսել, թէկուզ վաղը։ Մասնաժողովը աշխատելու է օր ու գիշեր անընդհատ, մինչև որ իր աշխատանքները կատարէ։ Միայն մասնաժողովը կը կատարէ իր պարտականութիւնը, և դուք, կարծում եմ, կը կատարէք ձեր պարտականութիւնները, չը տալով երբէք փքուն և անիրագործելի խոստումներ»։ (Հռետորը ամբիոնից իջնում է կենտրոնի և աջակողմի ծափահարութիւնների տարափի տակ)։

Նախագահ.—Վիճաբանութիւնները վերջացած են. խօսքը կը տրվի նրան, ով կառարկէ մինիստրների խորհրդի նախագահին։

Դահլիճում սկսվում է ընդհանուր շարժում, զանազան տեղերում լսվում են ձայներ՝ «Շշշ...»։ Շուտով տիրում է բացարձակ լռութիւն։ Նախագահը քուէարկութեան է դնում զանազան ֆրակցիաների առաջարկութիւնները՝ 1) հարկաւո՞ր է արդեօք մասնաժողով ընտրել.—ընդունվում է միաձայն. 2) հարկաւո՞ր է վերահսկողութիւն տեղերում.—հակառակ են խօսում բոլոր աջակողմեանները և կենտրոնը, թւով 287 մարդ, կողմնակից է ամբողջ ձախակողմը, թւով 168 հոգի. առաջարկը մերժվում է։ Ապա ձայների մեծամասնութեամբ մերժվում է այն առաջարկը—թէ հարկաւո՞ր է արդեօք մասնաժողովին յանձնել մատակարարական գործի օրինագծի մշակումը։ Մերժվում է նաև մասնաժողովին՝ ժամանակաւոր կանոններ մշակելու յանձնարարական առաջարկը։

Վերջապէս աջակողմեանների և կենտրոնի բուռն ծափահարութիւններով ընդունվում է Ռօդիչևի առաջարկութիւնը. ձախակողմեանները ձայնատուութիւնից ձեռնպահ են մնում։ Մասնաժողովը բաղկանալու է 33 անդամներից, որոնց ընտրում է ընդհանուր ժողովը։ Մասնաժողովի ընտրութիւնը յետաձգվում է հետևեալ նիստին, որ նշանակված է մարտի 12 ին, Տաւրիկեան պալատում։

Փակելով նիստը, նախագահը յայտարարեց խմբագրական և գրադարանային մասնաժողովների ընտրութեան հետևանքների մասին։ Առաջինի համար ընտրված են Կուզմին-Կարավաեվ, Մակլակով, Տաւլէնկօ, Վլադիմիր Հեսսէն, Պէրգամէնտ, Նալիվսկի, Արականցև. գրադարանային մասնաժողովի համար—Ստրուվէ, Կապուստին, Կիզեվետտեր, Վոլկ-Կարաչևսկի, Բօբրին, Իոսիֆ Հեսսէն, Վինօգրադով։ Նիստը փակվում է երեկոյեան ժամը 6 ին։

---

*) Թերևս ձախակողմում. Ծ. Թ.

ՄԱՄՈՒԼ

Դումայի արձակման մասին տարածված լուրերի առիթով «Русь» լրագիրը մատնանշում է, որ անհրաժեշտ է, որպէսզի կառավարութիւնը հերքէ այդ լուրերը։

Արտասահմանեան բօրսաներում արդէն մի քանի օր է, որ մեր արժեթղթերը, մանաւանդ պետական ֆօնդերը, ընկնում են արագութեամբ և սիստեմատիկ կերպով։

Բօրսայում տիրող ներկայ սարսափելի վիճակը բացատրվում է բարձր շրջանների մէջ պտտվող այդ լուրերով։ Բոլոր բօրսաներում միաժամանակ հաղորդում են իբրև անհերքելի մի փաստ,—թէև բոլորովին սուտ փաստ,—որ Դումային շուտով արձակելու են, իսկ նրա փոխարէն կը հրաւիրվէ զեմստվոյին (աւելի ճիշտ կը լինի ասել ազնուականների) ժողով ազնուականութեան և զեմստվոների ներկայացուցիչներից՝ ընտրողական օրէնքը մշակելու համար։ Այդ լուրերը ակնյայտնի սխալ են և անմիտ։ Այդպէս է ասում առողջ միտքը։ Սակայն բօրսան և հասարակութիւնը սարսափահար եղած այդպէս չեն դատում։ Այդ պատճառով այդ լուրերն էլ նպաստաւոր հող են գտնում իրանց համար և, ոչ մի հերքման չը հանդիպելով, գնալով աճում են և հաստատութիւն ստանում։ Նրանք ոչ միայն խոշոր նիւթական վնասներ են կրում, այլև բարոյական վնաս։ Կառավարութիւնը պէտք է ուշադրութիւն դարձնէ այդ վնասակար լուրերի վրա. նա պարտաւոր է հերքել նրանց լոկ այն հասարակ պատճառով, որ նրա լռութիւնը հաստատութեան նշան է համարվում։

Զարմանալի միամտութիւն է ցոյց տալիս լրագիրը, սպասելով կառավարութիւնից շիտակութեան ապացոյցներ։ Ի՞նչ արժէք ունեն նրա հերքումները։ Չէ՞ որ նա հերքեց միացեալ ազնուականութեան խորհրդի գոյութեան փաստը, մինչդեռ այդ խորհուրդը գոյութիւն ունի։ Նոյնն էլ կը լինի երևի Ժողովի մասին։

*

«Право» թերթի վերջին գրքոյկի մէջ տպագրված է մի ուշագրաւ յօդուած հասարակութեան մասնակցութեան մասին Պետական Դումայի աշխատանքներին։ Թերթը ասում է, որ ընտրութիւնների ժամանակ ազգաբնակութիւնը չէր կարող ղեկավարվել թեկնածուների գիտնական արժանաւորութիւններով միայն։ Մինչդեռ անհրաժեշտ է մանրամասն և զուտ գիտնական ծանօթութիւն ունենալ բազմաթիւ անյետաձգելի հարցերի հետ՝ զգուշաւոր և խոհեմ կերպով յարմարեցնելով նրան մեր կեանքի պայմաններին և համապատասխան լուծումն տալով։ Ոչ մի երկրում պարլամենտը չէ կարող գործել առանց հասարակական ույժերի գործունեայ աշխատակցութեան։ Մամուլը, գիտնական ընկերութիւնները, դաշնակցութիւնները, ժողովները գաղափարական սփիւռացիա են մղում և մատնանշում են այն կարևոր հարցերի լուծման միջոցները, որոնց մէջ շահագրգռված է ազգաբնակութիւնը։ Հարցը նրանումն է, որ այդ բոլորը հնարաւոր է միայն ազատ երկիրներում, բայց ոչ Ռուսաստանում, ինչպէս այդ ցոյց է տալիս իրականութիւնը։ Թէ մամուլը և թէ կուսակցութեան անդամները անկարող են օգնել պարլամենտական ֆրակցիային, «մասնակցել պարլամենտական աշխատանքներին»։ Իդէան ինքնըստինքեան շատ համակրելի է, սակայն թւում է, որ դժուար իրագործելի է։ Դրա համար «Право»-ի այդ յօդուածի հեղինակ Տալիան հետևեալ խորհուրդն է տալիս.

Մենք չունենք այն ստատիստիքական նիւթերը, մեր կուսակցական կազմակերպութիւնները այնքան հարուստ չեն ույժերով ու փորձառութեամբ, որոնք արևմտեաններն ունեն. մեր գաւառական մամուլը ընդհանուր առմամբ կանգնած չէ իր կոչման բարձրութեան վրա։ Գիտնական ընկերութիւնները պատրաստված չեն ընդարձակ հասարակական գործունէութեան համար, իսկ որ գլխաւորն է, ազգաբնակութեան ինքնաշխատութիւնը արուեստական կերպով զսպված է և բնական խոչընդոտների է հանդիպում համեմատաբար ստորին կուլտուրայի մակերևոյթի վրա։ Այդպիսի հանգամանքներում մեծ կարևորութիւն է ներկայացնում հասարակական աջակցութիւնը Պետական Դումայի օրէնսդրական աշխատանքներին։ Անհրաժեշտ է որ շուտափոյթ և հիմնաւոր միութիւն կայանայ այն բոլոր տարրերի մէջ, որոնք ընդունակ են ուղղակի թէ կողմնակի կերպով, իրանց գիտելիքներով թէ աշխատանքով մասնակցել ընդհանուր աշխատանքներին. անհրաժեշտ է Դումայի և հասարակութեան միջև համերաշխ աշխատակցութիւն կազմակերպել։ Այդ նպատակով պէտք է անմիջապէս զէնքի կանչել բոլոր եղած ույժերը, տեօրետիկներին և փորձառուներին, գիտութեան և տեխնիկայի հասարակական տարբեր խմբակների ներկայացուցիչներին, որոնք շահերի առանձնացած շրջանակներ ունեն, և որքան շուտ կանվի այդ բանը, այնքան աւելի շուտով կեանքը կը հերքէ այն անբարեխիղճ հէքեաթները, որոնք տարածվում են օպպօզիցիօն տրամադրված Դումայի աշխատանքի անընդունակութեան մասին։

Ինչ ձև կը ստանայ այդ կազմակերպութիւնը, որքան այդ նպատակի համար կարելի կը լինի օգտակար դարձնել գոյութիւն ունեցող ընկերութիւնները կամ ստեղծել նորերը, այդ յատուկ քննութեան նիւթ պէտք է դառնայ մեզ համար։

Այն, ինչ որ հնարաւոր է սահմանադրական երկիրներում, դժբախտաբար անհնարին է բիւրօկրատական Ռուսաստանում։

*

«Товарищъ» լրագրի մէջ «Միութիւնների ազատութիւնը և տնտեսական զարգացումը» վերնագրով իր յօդուածում Վ. Տօտօմեանցը մատնանշում է, որ Ռուսաստանը, ներկայումս տնտեսականի նկատմամբ դրված լինելով աւելի դժուար կացութեան մէջ, քան Ֆրանսիան էր մեծ յեղափոխութիւնից յետոյ, պէտք է դիմէ իր սեփական ույժերին և միջոցներին։ Այդ ույժերի մի մասը,—այն էլ խոշոր մասը,—կայանում է ինչպէս գիւղական, նոյնպէս և քաղաքային միութիւնների մէջ, երկրագործական գործիքներ գնող, պարարտացման, երկրագործական մթերքները արտահանող ընկերութիւնների, կաթնային կօօպերացիաների, սպառողական ընկերութիւնների, կրեդիտների մէջ և այլն։

Ֆրանսիան յեղափոխութիւնից յետոյ և Գերմանիան 1800—1870 թւականներին այն պատճառով այնքան դանդաղ քայլերով անցան բազմաւոր տնտեսութեան, որ նրանք համարեա գործնականապէս ծանօթ չէին ընկերութիւնների, ասօցիացիաների սկզբունքի հետ։ Մինչդեռ այս վերջին երկու տասնեակ տարվայ ընթացքում Գերմանիայի, Ֆրանսիայի, Դանիայի, Հոլլանդիայի, Շվէյցարիայի, Իտալիայի և Բելգիայի գիւղատնտեսութեան մէջ, շնորհիւ այդ միութիւնների, արագընթաց և հսկայական փոփոխութիւն կատարվեց։

Մանաւանդ ուշագրաւ է Դանիայի և Իտալիայի օրինակը. առաջինը գիւղատնտեսութեան մէջ տարածված բազմաթիւ կօօպերացիաների շնորհիւ մի որևէ 10 տարվայ ընթացքում [illegible] աւելացրեց իր հողերի արդիւնաբերութիւնը։

Բացի դրանից այնտեղ դեռ վաղ սկսել էին կազմվել զանազան ընկերութիւններ միահամուռ ույժերով հողեր մշակելու համար։ Դանիան, որ մինչև 1865 թւականը ամենաաղքատ երկիրն էր, այժմ եւրոպական մայր ցամաքի պետութիւնների մէջ ամենահարուստն է։

«Рѣчь» լրագրի մէջ տպագրված իր «Կալւ հացի էժանութեան համար» յօդուածում նոյն հեղինակը մատնանշում է, որ ամենուրեք հացի գները սկսում են թանգանալ, որը ազգաբնակութեան աղքատ դասի բանւորներին դրդում է սկսել մի շարժում այդ հարցը կանոնաւորելու նպատակով։

Զարմանալի բնորոշ է, հեղինակի ասելով, այն հանգամանքը, որ քաղաքային վարչութիւնները ամեն տեղ էլ բոլորովին անտարբեր են վերաբերվում այդ ժողովրդի աղքատ դասի համար կարևոր հարցի նկատմամբ։

Դրա փոխարէն բանւորների մէջ մասսայական շարժում է սկսվել այդ հողի վրա, որը արդէն դարձնում է մեր քաղաքային դումաների դասակարգային քարացած էգօիզմին, մի աւելորդ անգամ էլ ապացուցելով, որ նրանք անպայման վերջացնում են իրանց դարը, օրգանապէս անկարող լինելով «հոգ տանելու տեղական օգուտների և կարիքների մասին», որի մէջ է իսկապէս կայանում նրա գլխաւոր կոչումը։

ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ

Ստոլիպինը կարդաց իր դեկլարացիան։

Վաղուց էին նրան սպասում և նրա մասին վաղուց խօսում։

Այսօր նա մեր առջևն է դրված...

Ամեն բան կայ նրա մէջ. ստէօրէոտիպ ու անվերջ խոստումներ, որոնց հաւատալու ու վստահելու համար ոչ սիրտ է մնացել և ոչ էլ հաւատ սովատանջ ու արիւնաքամ երկրում։

Դեռ մի քանի օր առաջ մայրաքաղաքի թերթերը նախագուշակում էին այդ մեծադղորդ ու խորհրդաւոր դեկլարացիան՝ «բառեր, բառեր և բառեր» բնորոշ խօսքերով։

Չարդարացա՞ւ նա, արդեօք։

Դեկլարացիայում շօշափելով ամենաառաջնակարգ հարցերը, Ստոլիպինը բիւրօկրատիայի փորձառութիւնն է առաջարկում «անփորձ» ժողովրդական ներկայացուցչութեանը—Դումային այդ հարցերի լուծման համար։

Եւ որքան յանդգնութիւն է հարկաւոր բիւրօկրատական փորձառութեան մասին խօսելու այն ժամանակ, երբ Դումայի առաստաղը փուլ գալը և Գուրկօյի «խայտառակ» գործը դեռ ևս հրապարակի վրա են, դեռ ևս լիկվիդացիայի չեն ենթարկված։

Ագրարային հարցը այն գլխաւոր առանցքն է, որի շուրջն է այժմ պտտում ժողովրդական ներկայացուցչութիւնը, և Ստոլիպինի դեկլարացիան առանձին մեծ կարևորութիւն է տալիս նրան. սակայն նրա լուծման համար նա դարձեալ վերցնում է բիւրօկրատական վաղեմի մաշտաբը՝ խուտորային և համայնքների վերացման սիստեմը՝ սեփականութեան գաղափարը արմատացնելու յուսով։

Բարեհաճել է ուշադրութեան առնել և խոնավայրով բանւորներին։ Նա խոստանում է պատնէշներ չը կանգնեցնել բանւորական շարժման առաջ, չը միջամտել բանւորների և արդիւնաբերողների մէջ ծագած տնտեսական կռւին, բայց միայն... եթէ բռնութիւններ տեղի չեն ունենայ։

Երկրի կուլտուրական զարգացումը առաջնակարգ պահանջ է համարվում, բայց նախ պէտք է անցկացնել Ամուրեան երկաթուղային գիծը սահմանագծի վրայով, որպէս զի ծառայէ ոչ թէ ժողովրդի իսկական կարիքներին, այլ միայն պատերազմական նպատակներին և ապա միայն հոգ տանել երկրի ներսում հաղորդակցութիւնների գործը կանոնաւորելու։

Ժողովրդի կրթութեան հրատապ հարցը այսօր հրապարակի վրա է, ինքնըստինքեան մի անյետաձգելի պահանջ, բայց երկրի ներկայ ծանր տագնապալի օրերում անհնարին է այժմ և եթ ձեռնարկել բաւարարութիւն տալու նրան, պէտք է իրագործել աստիճանաբար։

Մինչդեռ կայ մի աւելի անհրաժեշտ պահանջ. պէտք է աշխատել գրաւած պահել նախկին արժանավայել դիրքը մեծ պետութիւնների շարքում և դրա համար պէտք է վերակազմել նաւատորմը, ցամաքային զօրքը։

Ի հարկէ, այն խնայողութիւնը, որ առաջարկվում է անել երկրի կուլտուրական զարգացումը բարձրացնող ձեռնարկութիւնները սեղմելով, յատկացվելու է անպատճառ սպառազինութեան նպատակներին։

Բայց այդ բոլորի համար հարկաւոր է փող և փող։ «Այդ բոլոր օրէնսդրական նախագծերը իրագործելու խնդիրը ամբողջապէս կախված է ֆինանսներից»,—ասում է Ստոլիպինը։

Առանց փողի անկարելի է որևէ գործ կատարել, իսկ կառավարութիւնը սպասել չէ կարող։

Այդ է ահա դեկլարացիայի բուն իմաստը և գեղեցիկ խոստումների շարժառիթը։

Պետական սնանկութեան սպառնալիքն է, որ թելադրում է Ստոլիպինի կաբինետին դուրս գալ ժողովրդի ներկայացուցիչների առաջ և իր դեկլարացիայով մատնանշել բիւջէի հաստատութեան անյետաձգելիութիւնը։ Փոխառութիւն կնքելու բոլոր փորձերը սպառված են արդէն. առանց ժողովրդական ներկայացուցիչների երաշխաւորութեան փող չեն տալիս։

Ի՞նչ անել։

Եւ Ստոլիպինը անխուսափելի կերպով դիմում է ժողովրդի ներկայացուցիչների աջակցութեանը սիրալիր խոստումներով։

Ուրիշ կերպ վարվել անկարելի է։

II

Թերի էր ու մշուշապատ այդ դեկլարացիան և Ստոլիպինը լրացրեց նրան։

Զինուորա-դաշտային դատարաններից, էկզեկուցիաներից և կախաղաններից յոգնած նա հաշտութեան ձեռք էր մեկնում ժողովրդի ներկայացուցիչներին։ Բայց միացեալ օպպօզիցիան արհամարհական լռութեամբ անուշադիր թողեց նրան։ Իսկ սօցիալ դեմօկրատիան համարձակվեց նոյնիսկ մերկացնել նրա իսկական, այլանդակ դէմքը։

Նրան հասկացրին, որ ժողովուրդը կարօտ չէ խնամակալութեան, որ կառավարութիւնը—այդ գործադիր մարմինը պարտաւոր է ենթարկվել ժողովրդից ընտրված օրէնսդրական հաստատութեան—Պետական Դումային։ Դա է միակ գրաւականը սահմանադրական կարգերի։

Ահա այդ ժամանակ միայն Ստոլիպինը դէն ձգեց իր դիմակը. ցոյց տուեց իր բիւրօկրատական ոգին և երևան հանեց իր իսկական դեկլարացիան։

«Չէք կարող վախենալ. Մոռանանք ատելութիւնը, գնանք դահոյքի առաջ և դրական աշխատանք սկսենք»,—պատասխանում է կառավարութեան ղեկավար Ստոլիպինը իր արդարութեան, բայց և հզօրութեան խորին գիտակցութեամբ։

Բիւրօկրատական անպատասխանատու մինիստրութիւնը այլ կերպ չէ էլ կարող պատասխանել, և նրա արտաքուստ խաղաղ այդ պատասխանի մէջ շատ բան է պարունակվում և, ի հարկէ, ամենից առաջ ահաւոր սպառնալիք ժողովրդի ներկայացուցիչների և ազատագրութեան դատը դաւանող ույժերի համար, եթէ նրանք չգտնվելու լինեն Ստոլիպինի խնամատար խորհուրդներից։

Այդ սպառնալիքների պատասխանը օպպօզիցիայի արհամարհական լռութիւնն էր։

Լ. Դանիէլեան

ՋՈՒԹԱԿԱՀԱՐ Ց. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Թիֆլիս է եկել ջութակահար Ց. Նալբանդեան։

«Մշակի» մէջ զանազան ժամանակներում տպված տեղեկութիւններից մեր ընթերցողները գաղափար ունեն տաղանդաւոր ջութակահարի մասին։ Պետերբուրգի մեր թղթակիցները յաճախ առիթներ են ունեցել խօսելու Ց. Նալբանդեանի նուագածութեան մասին։

Թիֆլիսցիներին յայտնի է Նալբանդեան իր գործունէութեան սկզբնական շրջանում, երբ ութ տարի սրանից առաջ նա հիւր էր եկել մեր քաղաքը։

Այժմ նա հասուն և կատարելագործված երաժիշտ է մեծ եւրոպական րեպերտուարով և սեփական ստեղծագործութիւններով։

Առաջիկայ երեքշաբթի օր Ց. Նալբանդեան տալիս է կօնցերտ Երաժշտական Ընկերութեան դահլիճում։ Անշուշտ մեր հասարակութիւնը կը շտապէ ներկայ լինել այդ կօնցերտին։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Հեռագիրը հաղորդեց պալատից սադրազամի, մեծ-վէզիրի հրաժարման լուրը։ Մեծ-վէզիրը, բացի մինիստր-նախագահի պաշտօնից, վարում էր և արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնը։ Պարսկական յեղափոխութիւնը օրից օր մտնում է նոր փազիսների մէջ։ Այդ կիսա-կալուածատիրական շարժումը փոքր առ փոքր դառնում է ժողովրդական շարժում, ընդլայնելով իր պահանջների և կարիքների շրջանակը։

Պարսկաստանի ապագան այնքան անորոշ է, յեղափոխական շարժման ծովը այնքան փոթորկալից ու սպառնական, որ այդ երկրի բաղդով շահագրգռված երկու պետութիւնները՝ Անգլիան և Ռուսաստանը ծանր մտատանջութեան մէջ են երևում։

Վախենալով՝ որ շարժումը մեծ չափեր ընդունոյ և դուրս գայ իր որոշ սահմաններից, երկու պետութիւններն էլ զինուորական պատրաստութիւններ են տեսնում, պահանջված դէպքում պաշտպանելու համար իրանց դեսպանութիւնները։

Հեռագրական լուրերից յայտնի է դարձել, որ Ռուսաստանը ուղարկել է Թէհրան կօզակների մի զօրախումբ, իսկ Անգլիան շարժման մէջ է դրել Հնդկաստանի զօրքերի մի մասը, ուղարկելու համար Թէհրանի դեսպանութեան ի պաշտպանութիւն։

Այն հեռագրալուրերն, որոնց համաձայն Պարսկաստանի այլևայլ մասերում, ինչպէս օրինակ Թաւրիզում, եւրոպական ապրանքները՝ թէյ, շաքար, և այլն, բոյկոտի են ենթարկվում, պէտք է հասկանալ այն մտքով, որ պարսիկ ժողովուրդը բացասաբար է տրամադրված դէպի ռուս կառավարութիւնը և նրա հմայքը։ Արդարև բոյկոտի ենթարկված առարկաները՝ թէյ, շաքար, և այլն, ռուսական ապրանք են, և, պարսիկ երբ բոյկոտ յայտարարելով ռուսական ապրանքներին, կամենում են վրէժխնդիր լինել ռուս կառավարութիւնից։

Եւ այդ վրէժխնդրութեան ակտը բացատրում են այն ձևով, որ երբ թէ Ռուսաստանը թշնամական դիրք է բռնել դէպի պարսիկ յեղափոխական շարժումը, բարեացակամ աչքով է նայում Պարսկաստանի նորածին ներկայացուցչական ժողովի վրա։ Իսկ ընդհակառակը, լուրերի համաձայն, հետզհետէ աւելանում է անգլիական հմայքը, որովհետև նա հաշտ աչքով է նայում Պարսկաստանի սահմանադրութեան վրա։

Որ պարսիկները լաւ չեն տրամադրված ռուսական ազդեցութեան, ցոյց էր տալիս և՝ այն հեռագրալուրը, որի համաձայն Ղազվինի նահանգապետը չէր պաշտպանել ռուսական ճանապարհը և այդ պատճառով էլ, նա, ռուսաց դեսպանի ստիպման վրա պաշտօնանկ է եղել։

Անգլիական և ռուսական ազդեցութիւնների այս լուռ մենամարտը, երևի կը վերջանայ ի նպաստ առաջինին, որովհետև ժողովրդական շարժումը ոչ միայն չէ մեղմանում, այլ ընդհակառակը աւելի ու աւելի զօրեղանում է և բարդանում։ Ըստ երևոյթին, Մուշիրը-Դովլէ մեծ-վէզիրի պաշտօնանկութիւնը այդ շարժման նուաճումներից մէկն է։

Ահա թէ ինչպէս է բացատրվում այդ կարևոր եղելութիւնը «Իրշադ»-ի կողմից. «Մուշիրը-Դովլէն, նախ քան ազատագրական շարժումների ծնունդը, արտաքին գործերի մինիստր էր։ Պարսկաստանի ամենավաղեմի ու ամենայայտնի ազնուատոհմերից էր։ Ազատագրական գաղափարները զարթնելիս՝ նա հակվեց դէպի ժողովրդական պահանջներ ու ցանկութիւնները և այդ կերպով ամենքին դարձաւ սիրելի։ Ընդհակառակը, նրա նախորդը, Ալաէդ-Դովլէն ազգի ատելին էր և օրէցօր ժողովուրդի թշնամութիւնն ու զայրոյթը վառակելով, վերջ ի վերջոյ պաշտօնանկ եղաւ և աքսորվեց։ Նրա տեղ անցաւ Մուշիրը-Դովլէն։

«Որպէս մեծ-վէզիր, Մուշիրը-Դովլէ Նասրուլլահ խանը՝ իր անդրանիկ որդու, Մոսկվայի համալսարանն աւարտած և Պետերբուրգի պալատից դեսպան Հասան Խանի հետ, աշխատեց սահմանադրական կարգերի Պարսկաստանում հաստատվելուն։

«Սակայն հետզհետէ աւելանալով ժողովրդի ազատագրական և սահմանադրական ձգտումները. մեծ-վէզիրի երազած սահմանները փըլցին անցան։

«Այդ րոպէից սադրազամը այլ ևս չէր համապատասխանում ժողովրդական պահանջներին և ցանկութիւններին։ Նրա և ազգային ժողովի մէջ ընդհարումը անխուսափելի դարձաւ։ Այդ ընդհարումը առաջ եկաւ նախ՝ մաքսային վերատեսուչ բելգիացի Նօսը հրաժարեցնելու և յետոյ՝ արքայական իշխանների՝ պարլամենտի հանդէպ պատասխանատու լինելու հողի վրա։

«Պատգամաւորները զնում էին Նօսի պաշտօնանկութեան և շահզադէների պաշտօնազըրկութեան և պատասխանատւութեան պահանջները։ Մեծ-վէզիր Մուշիրը-Դովլէն չէր համաձայնվում։

«Ն. Մ. Շահը, մի փոքր տատանվելուց յետոյ, ազգի ցանկութիւնը իրագործելով մեծ-վէզիրի հրաժարականն ընդունեց։

«Միւս վէզիրների պաշտօնի վրա մնալուց պէտք է եզրակացնել, որ նրանք սադրազամի՝ հետ համամիտ չէին։

«Ցամենայն դէպս այս փաստը ապացոյց է այն բանին, որ Թէհրանում գումարված ազգային ժողովը օրից օր ուժեղանում է և նըրան աջողվում է համնել իր նպատակին՝ ազգի ընդհանուր վարչութեան ղեկը վերցնել իր ձեռքը։ Իսկ ազգը իր ներկայացուցիչներին պահպանելու համար ոչ մի ջանք չէ խնայում։ Եթէ նկատի առնենք Պարսկաստանի ամեն կողմերից հասնող ձայները, կը յանգենք այն եզրակացութեան, որ ամբողջ ժողովուրդը լարված ուշադրութեամբ հետևում է ազգային ժողովի գործունէութեան և պատրաստութիւններ է տեսնում անաջողութեան դատապարտելու կառավարական ոտնձգութիւնների ամեն մի քայլը, եթէ նա տեղի կունենայ։

«Իսկ այս երևոյթը մի մեծ ու անյողդողդ երաշխիք է, որ սահմանադրական կարգերը հաստատ կը մնան Պարսկաստանում»։

Պարսիկ ժողովուրդը դժբաղդաբար դեռ ևս շատ անպատրաստ է վերանորոգման գործը ղեկավարելու։ Նրան հարկաւոր են մի քանի ուժեղ գլուխներ բարենորոգումների դատը նպատակայարմար ճանապարհով տանելու համար։

Բայց ժողովուրդները յաճախ ամբողջ դարերի կեանք են ապրում յուզման, փոթորկալից շարժումների ընթացքում։ Կեանքը նրանց կռում ու կոփում է։

ԳՒՂԱԿԱՆԻ ՑԱՒԵՐԻՑ

Գօրիս, փետրվարի 27-ին

Այժմ խօսենք այգեգործութեան մասին։

Այստեղ ընթերցողի ուշադրութիւնը կը հրաւիրեմ գլխաւորապէս ինձ լաւ ծանօթ՝ Գօրիսի, Բարաշէնցի, Խոտու, Շինուհայրու և Հալիձորի այգիների վրա։

Ցիշեալ գիւղերի այգիների մեծ մասը խաղողի այգիներ են, սակայն վերջին 10—15 տարիների ընթացքում (շատ չնչին բացառութեամբ) գիւղացիք ոչ միայն գինի չեն շինել, այլ և բերքի անհամեմատ պակասութեան պատճառով, ըստ իրանց բարբառի, մինչև անգամ չեն էլ կշտացել խաղողից։

Ճշմարիտ է, երբեմն խաղողի վաղերը ծաղկելուց յետոյ բերքը բաւական առատ է երևում, սակայն յանկարծ որևէ հիւանդութիւն այնպէս փչացնում է այդ բերքը, որ ուտելու անգամ այլ ևս բան չէ մնում։

Այսպէս, գիւղացու երկար ամիսների քըրտնաթաթախ աշխատանքը մի կամ երկու օրվայ ընթացքում ոչնչանում է, ինչպէս կասեն՝ «խաղը մոխիրն է թափվում», մինչդեռ գիտութիւնը շատ հեշտութեամբ առնում է այս տեսակ (գլխաւորապէս՝ թող, միլդիում, շալիկայ) հիւանդութիւնների առաջը։

Ինչպէս երևում է վերև բերածից, այստեղ մեղքը նոյնպէս ընկնում է դպրոցների պակասութեան և եղածների անհամապատասխան լինելու վրա։

Տեղիս անասնապահութեան վրա միայն զարմանալ կարելի է։ Մեզանում կանոնաւոր անասնապահութիւն չը կայ. չը նայած նրան, որ այստեղ, մանաւանդ Գօրիսում, շատ լաւ արօտատեղիներ կան, բայց այդ տեսակի արդիւնաբերութեան վրա մեր ժողովուրդը դեռ մատների արանքով է նայում։

Այստեղ, Զանգեզուրում, այծի տեղ կով են պահում, իսկ կովի տեղ՝ այծ. բացի սրանից ուշադրութիւն չը դարձնելով որակի վրա, աշխատում են քանակը մեծացնել։

Այս բանը հաստատելու համար բաւական է բերել երկու օրինակ. ա) Գօրիսը իր «Երի չէն» կոչված գիւղերով, որոնք իրանց ընդարձակ արօտատեղիներով, հարուստ բուսականութեամբ և քաղցր ջրերով հրաշալի յարմարութիւններ են տալիս, նոյն իսկ, ամենալաւ տեսակի անասնապահութեան համար, մինչև օրս, բացի տեղական անպէտք կովերից, ձեռք չեն բերել լաւ տեսակի գոնէ մի քանի կովեր։

բ) Տաթևի «Անապատ» կոչված տեղում, կամ Երիցաթումբ, Տանձատափ անուանեալ գիւղերում անսպառ քանակութեամբ այծ կարելի է պահել. սակայն չը զարմանաս, ընթերցող, եթէ ասեմ, որ մեզ մօտ այծ ունենալը անպատուաբեր է համարվում, երբ թէ այծի կաթը լաւ չէ, նրա պանիրը շատ վատն է և այլն։

Այս ամենից պարզ երևում է, որ այստեղ նոյնպէս մեղքը ընկնում է դպրոցների պակասութեան և եղածների էլ բոլորովին անհամապատասխան լինելու վրա։

Հասկանալի է, որ եթէ գիւղացին գաղափար ունենար շվէյցարական պանիրների մասին, նա չէր ասի՝ որ այծի կաթը կամ պանիրը վատ են և այլն։

Իսկ այդ գաղափարը նա պիտի ստանայ նիւթին համապատասխանող դպրոցներում, սակայն ցաւօք սրտի պիտի ասեմ, որ դպրոց չունենք, իսկ եղածներումն էլ փոխանակ գիւղատնտեսական ամենատարրական գիտելիքները սովորեցնելու, սովորեցնում են՝ «մի շնար», «մի գողանար», «մի սուտ վկայեր» և այլն. մէկը հարցնի՝ թէ պարոնայք, չէ՞ որ, եթէ ուզում էք շնութիւն, գողութիւն և սուտ վկայութիւն չը լինեն, պէտք է մարդուն ապրելու միջոց տաք՝ այն է ա) անբերրի երկրագործութիւնը բերրի պիտի դարձնէք, բ) ներկայ անպէտք ձևի անասնապահութիւնը պիտի լաւ զարգացնէք և այլն։

Եւ այս բոլորը կիրագործվի միմիայն այն ժամանակ, երբ ամեն մի գիւղ կամ համայնք կունենան սեփական գիւղատնտեսական դպրոց ամենատարրական գիտելիքներով։

Ձը մոռանանք յիշել, որ տեղիս կաթնատնտեսութիւնը զարգացնելու համար մօտ օրերս մի ժողովում պ. Սամուէլը յայտնեց հետևեալ համակրելի միտքը. համայնական կամ գիւղական հասարակական ույժերով իւրաքանչիւր համայնքից կամ գիւղից ուղարկել մի-մի երիտասարդ կաթնատնտեսութիւնը լաւ սովորելու, որից յետոյ նրանք վերադառնալով իրանց տեղերը, կը սկսեն աւելի հասկանալի և պարզ (НАГЛЯДНО) կերպով սովորեցնել գիւղացիներին այն բոլորը, ինչ որ իրանց սովորած կը լինեն կաթնատնտեսութեան վերաբերեալ։

Սա շատ գեղեցիկ միտք է և ձեռնտու բոլոր գիւղացիներին, որոնց մնում է միայն աջակցել այս միտքը առաջարկող պարոնին, որպէսզի նա կարողանայ իրագործել այս վերին աստիճանի ցանկալի և անհրաժեշտ գործը, այլապէս միտքը միտք կը մնայ, իսկ գիւղացու դրութիւնը դարձեալ նոյնը։

Ողջունում ենք այս առաջարկը և ցանկանում ենք իրագործված տեսնել։

Ց. Գրիգորեանց

ԳԱՐՈՒՆԸ ՈՒՇԱՆՈՒՄ Է

Նոր-Բայազէտ, մարտի 5-ին

Փետրվարի 16-ից սկսած, 3 օր շարունակ գիշեր-ցերեկ ձիւն եկաւ մեզանում և այդ հանգամանքը արգելք եղաւ գարունը մօտենալուն, դաշտերը բացվելուն, քանի որ օդը ընկաւ սաստիկ ցրտել և սառնամանիքները (23-24 և 25-ի գիշերները ցրտի աստիճանը հասաւ 28° և 29°-ի) էլ աւելի արգելք դարձան ձիւնի շուտ հալվելուն։ «Գարունը ուշանում է»,—ասում են բոլորը. և իրաւ, գարունը մի ամբողջ ամսով և գուցէ դեռ էլ աւելի ժամանակ յետ ընկաւ մեզանում, որովհետև մինչև փետր. 16-ը հին՝ առաջվան ձիւները գրեթէ հալվել-չքացել էին և քիչ էր մնում, որ դաշտերը ազատվէին ձիւնից, երբ հողագործը ուրախ-զուարթ կը սկսէր իր դաշտային աշխատանքները, դուրս հանելով իր լծկանները գոմերի մութ անկիւններից, որտեղ 6-7 երկար ու ձիգ ամիսներ կանգնած ծամում, որոճում են... Բայց դժբաղդաբար այդ մտադրութիւնները ի դերև ելան և մեր գարունը ուշացաւ, մեծ վիշտ պատճառելով ռանչպար դասակարգին, որին պակասում է թէ անասունների կերը — խոտ ու դարմանը — և թէ իր կենսական պէտոյքները—գարին, ցորենը, ալիւրը և այլն, որոնք ձմռան երկարութեան և այլ հանգամանքների պատճառով ամենաթանգ գին են գտել...

Բայց գիտէք, ընթերցող, որքան թանգ է նստում հողագործութեան համար գարնան այդ մի ամսով ուշանալը. պէտք է երևակայել, որ այժմ այնպիսի մի կրիտիքական ժամանակ է, որ ռանչպար բոլոր դասակարգերը, շատ քիչ բացառութեամբ, սպառել են իրանց թէ անասունների կերը և թէ իրանց տան պաշարները, ըստ որում նրանք մեծ յոյս էին դրել, որ ահա շուտով գարունը սկսելուն պէս դուրս կը գան աշխատանքի և թէ իրանք և թէ իրանց «մալը»—ոչխարն ու տաւարը—իրանց ապրուստը կը գտնեն բնութեան ծոցում... Բայց աւաղ, գարունը ուշանում է, քանի որ այժմ մարդաբոյ ձիւն է կանգնած դաշտերում, և մեր ամբողջ ազգաբնակութիւնը ահով և երկիւղով է բռնված՝ թէ արդեօք ինչպէս պէտք է ելքը գնայ, երբ նա սպառելու է և իր վերջին ունեցած-չունեցածը։ Եւ ահա այդ դրութիւնն է պաշարել մեր կողմերի հողագործներին, որոնցից շատերը, բացի այն, որ հէնց աշունքից հաց են գնում ուտելու համար, մի բուռն սերմացու չունեն անգամ իրանց արտերը սերմելու։ Եւ եթէ մի ճար չը լինի սրանց իրանց վարուցանքը կանոնաւոր կերպով կատարելու համար, հաւատացած եղէք, որ եկող տարի աւելի վատ պայմանների մէջ կը լինի նրանց տնտեսական դրութիւնը։

Սակայն «կուշտերի» ինչ դարդն է թէ «քաղցածները» էլ աւելի կը սովամահան. նրանց հոգսն է միայն, որ իրանք ապահով լինեն և որ իրանցից մի կոպէկ չուզեն, պըրծանք գնաց... Այդ էր անշուշտ պատճառը, որ անցեալներում, երբ մեր քաղաքի երիտասարդներից մի քանիսը պ. Ց. Իւսուֆեանցի առաջնորդութեամբ հանգանակութիւն բացին աղքատների օգտին, մեր ժողովրդի մեծամասնութիւնը կամ չը մասնակցեց հանգանակութեան, առարկելով, որ հէնց իր քթի տակ աւելի շատ դժբաղդներ կան և կամ թէ շատ նուազ չափով նուիրատուութիւն արեց, որ ոչնչով չարդարացրեց ձեռնարկողների յոյսերը...

Սակայն գարունը ուշանում է և մենք աւելի գործ ունենք կատարելու։ Բայց դրա մասին մի ուրիշ անգամ։

Գ. Սիմոնեան

ՆՈՒԽՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առհասարակ Նուխին, եթէ երբևիցէ զբաղեցրել է պարբերական մամուլը, առաւելապէս իր քրոնիքական դարձած դպրոցական խնդրով. ահա 2 ամիս է այդ խնդիրը յուզում է մտքերը. գրեցին թեր և դէմ և գրում են. մի բան, մեր կարծիքով, աչքաթող են անում։ Անցեալի ծանօթութիւնը պարզ ցոյց է տալիս, որ Նուխում, երբ յաջորդը հմուտ վարպետ է եղել, դպրոցի գործը առաջադիմել է խաղաղ, առանց «սկանդալների» և ընդհակառակը. բաւական է միայն աչքի անցնել ժամանակի «Մշակը» համոզվելու համար, որ այդ այդպէս է։

1865 թ. պ. Շանշեանի ջանքերով հիմնված Նուխու դպրոցը Հասան-Ջալալեանցի հոգաբարձութեան տակ, հոգաբարձուի և ուսուցչի փոխադարձ համերաշխութեամբ, ծաղկում էր օրաւուր և յաճախակի կրկնվող ուսուցչական զրոյցներն ու թէժև հանդէսները գրաւում էին քաղաքացիներին դէպի կրթարան և այս՝ 4—5 տարի շարունակ։ Սակայն նշանակվում է Նուխի նոր յաջորդ (Գրիգոր վարդ.), միանգամայն անհամապատասխան իր պաշտօնին և դպրոցը փոխվում է անձնական հաշիւներ մաքրելու ասպարէզ. Նախկին ուսուցչասէր հոգաբարձուն դառնում է «ուսուցչատեաց» և «ուսումնատեաց» վարժապետը «փուչ», «անպիտան»... Խլրտում, կռիւ և ի հարկէ «արձակումն ուսուցչին» իր բոլոր պարագաներով։

Հրաւիրվում է նոր ուսուցիչ, «մի ուսումնական երիտասարդ», որ անմիջապէս սկսում է բարեկարգել դպրոցը և կրթական մասին ույժ տալ. բայց սրա հետ ևս չեն կարողանում հաշտվել հոգաբարձուն ու յաջորդը և այս «երիտասարդը» «թօփալ դադանակների» ձեռքից համարեա թէ շալկանց փախչում է Նուխուց («Մշակ» 1874 թ. № 32)։

Խորիմաստ յաջորդը յանձնում է այս անգամ դպրոցը հռչակաւոր Զալալին, որ չը սիրելով դպրոցում անցնել «զանազան դատարկ-մատարկ բաներ», իր դասընթացքը սկսում էր և վերջացնում աշակերտներին կանոնաւորապէս քաղել տալով Սաղմոս, Ժամագիրք և Սայաթխեանի քերակ. («Մշակ» և «Մեղ. Հայ.» 1874—1879)։

Դպրոցական գործերի այս քաօսում փոխվում է յաջորդը և Գրիգորին փոխարինում է Գրիգորիսը։ Հրաւիրվում է ուսուցիչ Ալ. Տէր-Ցակոբեանը, որ դեռ ևս չը վերակազմած դպրոցը շատ շուտով դառնում է հոգաբարձու Թ. Շ.-ի աչքում «փուչ և գրքեր, տետրակներ վաճառող, փողը ուտող» («Մշակ» 1879 թ. № 125)։ Եւ ինչ ասել կուզէ, փուչ վարժապետը վռնդվում է իսկոյն և եթ, կողպվում են մանուկ սերնդի առաջ դպրոցի դռները (1878 թ.) ընդմիշտ և վրա հասած 1879 թուին ոչ լրագրական յօդուածներն ու առաջնորդողները («Մշակ» և «Մեղու Հ.»), ոչ ժողովարարութեամբ Նուխի եկած Ամբրոսիոս վ. Ռուբինեանցի սրտաբուղխ քարոզները և ոչ էլ Կ. Կամսարականի յորդորանքով Նուխում կազմված «ուսումնասիր. ընկերութիւնը» իր 1100 ր. դրամագլխով չեն կարողանում համոզել յաջորդին ու հոգաբարձուներին վար առնել երկաթէ կտորը սպասեալ դպրոցի ճակատից, մինչև որ զանազան Գրիգորեաններին յաջորդում է (1882) Սաթունեանց վարդապետը։

Այս ժիր վարդապետը ոչ միայն լայն բաց է անում մատաղ սերնդի առաջ դպրոցի դըռները, այլ և հիմնում է Նուխում իգական դպրոց և դրա մի փառաւոր շինութեան հիմքը դնում, որի միջոցների համար նա չէր քաշվում իր անձը վտանգելով անդադար շրջանակը ժողովարարութեամբ պտտելու. Կազմում է ուսուցչ. խումբ, հրաւիրում է վարժուհի և նախկին «անբարիշտ» հոգաբարձուք այնպիսի մի սիրով են կպչում գործին, յաջորդի, ժողովրդի բանիմաց մասի և ուսուցչ. խմբի այնպիսի մի համերաշխութիւն է ստեղծվում, որ իրաւամբ Սաթունեանցի շրջանը Նուխում այժմ էլ նախանձով է յիշվում։ Դպրոցական հանդէսներ, ներկայացումներ, յաճախակի տեղին քարոզներ, ժողովներ «իշխանների», ընթերցանութիւն, շաղկապել էր հայ դպրոցը հայ ժողովրդի հետ, և այս ծաղկեալ վիճակը աւելի ևս բարգաւաճ շարունակում է Սաթունեանցի յաջորդ Վահան վարդապետը, որ աւելի լայն ծաւալ տալով կրթական գործին, փռում է դպրոցների մի ցանց նաև գաւառի հայ գիւղերում։ Ցաջորդի և ուսուցիչների ջանքերով 1891 թ. բացվում է Նուխում բարեգործ. ընկ. ճիւղը, մի երկու տարի յետոյ գրադարան-ընթերցարան և այս ձիգ տարիների ընթացքում չեղաւ մի տարի, որ Նուխու դպրոցներում հոգաբարձու և ուսուցիչ իրար բօղազ պատռէին և կամ դպրոցը փողոցային սկանդալների կրկէս շինէին։ Այդ դեռ ևս բաւական չէ. երբ դպրոցները պաշտօնապէս փակվեցին, հմուտ յաջորդների ջանքերով դպրոցները այնչափ էին բարգաւաճել նաև նիւթապէս, որ բացի մի աւարտած և մի կիսատ ընդարձակ շինութիւններից, ընդունող վարչութեան յանձնվեց նաև դպրոցական մի պատկառելի գումար...

Վահան վարդապետին իրար ետևից յաջորդեցին «արխիվային» անպէտք վեղարաւորներ (Ցովսէփ, նախկին Գրիգորիս) և Նուխու դպրոցները իրանց ոչ երկարամեայ կեանքում դարձեալ աղմուկների, խաբի, սկանդալների ասպարէզ դարձան. ինչ խայտառակութիւններ, ինչ կլոռութիւններ ասէք չը գործվեց դպրոցում, Թումանեան, հակա-Թումանեան վէճեր, հոգաբարձու, յաջորդ և ուսուցիչ իրար օձիք բըռնած, քանիցս ուսուցչական խմբեր արձակված, դպրոցի դասերը դադարած, մի խօսքով այն ամենի նախատիպը, ինչ որ այժմ է, մինչև որ վարչութեան ձեռքը վերջ դրեց պայքարին կնքելով դպրոցների դռները։

Անցան մռայլ, հոգեմաշ տարիներ և հայ դպրոցների փականքների փակվելու լուրը բերկրանքով լցրեց տանջված ժողովրդի սիրտը. Նուխին ևս ցնցվեց, սկսվեց դպրոցների բացումը. յաջորդ էր եկել Եղիշէ վարդապետը և մեր նորածին, դեռ հազիւ բացված կրթական անդաստան դպրոցները երկու հզօրագոյն ցնցումի ենթարկվեցին անցեալ և այս տարի յաջորդի, հոգաբարձուների և ուսուցիչների ընդհարումով. առաջին խայլին, լաւ էր, զոհ գնաց միմիայն աւագ ուսուցիչը, իսկ երկրորդին ամբողջ դպրոցն ու 500 սաներ սանուհիներ...

Ես դեռ չը վերջացրի։

Իքս

ՆԱՄԱԿ ՍԱՄԱՐՂԱՆԴԻՑ

Մարտի 1-ին

Երէկ վերջնականապէս կայացաւ քաղաքի և գաւառի կողմից Պետական Դումայի մէկ պատգամաւորի ընտրութիւնը։ Ընտրող 40 հոգի պատուիրակներից ներկայ էին 33 հոգի, որոնք 17 ձայնով ընդդէմ 16-ի ընտրեցին պետական ծառայութեան բժիշկ, ազգով լեհ, սօցիալ դէմոկրատ Աբրամովիչին։ Պատուիրակների ընտրութեան ժամանակ հրապարակում գործում էին հակոտնեաները, ուր հաւաքված էին բոլոր սև-հարիւրակային, պատրիօտական ու խուլիգան տարրերը, և որոնք պէտք է ասել իրանց պատուաւոր քանակութեամբ մեծ երկիւղ էին պատճառում, կադէտները և պրօգրեսիստների դրութեան։ Թէ քաղաքում և թէ գաւառում ամբողջապէս անցան վերջիններիս թեկնածուները։ Նրանք կազմված էին բացառապէս ծայրայեղների թէ կուսակցական և թէ անկուսակցական էսդէկների գերակշռութեամբ։ Իբրև պատգամաւոր միակ թեկնածու նախորոշված էր Ա. Դ. Մօրօզով, որը երկար ժամանակից իվեր անլուր զրկանքներով հիւծում է Տաշկենդի բանտում. ամենքի համակրութիւնը նրա կողմն էր, իսկ բիւրօկրատների աչքի փուշը, ուստի և պատուիրակ ընտրվելուց յետոյ անիրաւացի կերպով ցուցակից հանվեց։ Նրա հետ ցուցակից հանվեց նաև հայ քահանայ Բէկգիւլեանց։ Այսպիսով միակ թեկնածուն իրաւազուրկ լինելով, մնացածների մէջ չը կար մէկը, որ կարողանար ընտրողների ընդհանուր վստահութիւնը վայելել։ Շատ շատերի ախորժակները բացվեցին, Տաւրիկեան պալատի բազկաթոռներին տիրանալու տենչը շատերին էր անհանգստացնում։

Ի միջի այլոց նաև խաժակական բեկեղատներով «բիւրեղացման» պրոցեսսի մէջ գտնվող ի վերուստ «անսխալական ու անձեռնմխելի» յայտարարված մի քմապետ էլ հև ի հև եղած, քափ-քրտինք կորած, անսպառ եռանդով ձիգ ու ջանք էր թափում այդ ասպարէզում ևս իր փառքի ապօգէին հասնելու։ Մինչև անգամ բոլորովին վստահ լինելով իր երազների իրականանալուն վրա, նաև պարծենկոտութեամբ շտապել էր արդէն ամեն պատահողի սրտի լիառատ բերկրանքով ու հմայիչ նկարագրութեամբ իր ապագայ անելիքների ու մարշրուտի մասին բացատրել։

Զը գիտենք մօրալի կօդէկսի ո՞ր արդարացուցիչ հիման վրա առհասարակ մարդիկ խղճի խայթոց չեն զգում ոտք կոխելու այն տեղերը, ուր մաքուր ու անբիծ գաղափարներով տոգորված «ընտրեալները» պիտի մտնեն միայն։

Ի՞նչպէս կարող է մի մարդ միլիօնաւոր ժողովրդի դարերից ի վեր զանազան բռնակալների ձեռքով ոտնահարված ու բռնաբարված իրաւունքների համար կռւել, երբ ինքը իր գործունէութեան սահմանափակ շրջանում անգամ կատարեալ մարմնացումն է նոյն ինքնիշխան ուղղութիւնների։ Ի՞նչպէս կարող է մի մարդ հազարաւոր աշխատաւոր ժողովրդի արիւն-քրտինքով վաստակած կոպէկների համար վերահսկողութիւն, կօնտրօլ պահանջել, երբ ինքը....

Այո, ժողովրդական ներկայացուցիչ չեն կարող լինել այն մարդիկ, որոնք ամեն պարագայում ու ամեն տեղ առաջնորդվելով «առանց միջոցների խտրութեան» վարդապետութեամբ, ներկայանում են մի լօզունգով aut Caesar aut nihil։

Էմիկ

ՄԻ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

(Նամակ Շուշից)

Ղարաբաղի թեմի կօնսիստօրիայի աղջամուղջը վրդովված է կոյր տէր-Եղիշէ Թարխանեանի սխրագործութիւններով։ Ամենից աւելի է, որ հասարակութեան մէջ շշուկներ են պտտում, թէ տէր-Եղիշէն քամիլի զեղծումներ է կատարել պսակադրութեան խընդիրներում, որ նա կեղծ ու անպաշտօնական հրամաններ է արձակել կօնսիստօրիայից գողացած բլանկների միջոցով և անխիղճ ու աներկիւղ վայելում է ամիսներ շարունակ այդ գաղտնագողի ինքնիշխանութիւնն ու արտօնութիւնը։

Մեզ յայտնի է, որ կօնսիստօրիայում կան անդամներ, որ կը կամենային լուսաբանութեան ու հասարակական դատաստանի տալ տէր-Եղիշէի արարքը։ Սակայն լսում ենք, որ կօնսիստօրիայի նախագահ Ներսէս վարդապետը մինչև այժմ չէ խնայում պատսպարելու իր սիրելի «ընկերոջ» վրա հասնող վտանգից։ Միանգամայն աններելի է բարձրապատիւ տիրոջ այդ քայլը։ Ինչու, ինչ պատճառով ճիզուիտականութեան սովոր վարկաբեկ էակները, որ փաթթված են փիլոնում և գլուխը ծածկած կամիլաւկով, պիտի արտօնութիւն վայելեն ոճիրներ գործելու և դրա հետ միասին ազատ մուտք վայելելու դպրոցներում և այլ հասարակական հիմնարկութիւններում։

Տէր-Եղիշէն, ամեն տեղ համապատասխան բլոկ կազմած, ազդեցութիւն է վայելում։ Իր ժամանակին աշխարհիկ զգեստով նա պղտորում էր մանկավարժների խաղաղութիւնը, զբաղվում պլագիատով և մաշելով հզօրների շեմքերը, այսօր փիլոնաւոր է դարձել, քարոզում է քրիստոնէական բարձր բարոյագիտութիւն եկեղեցիների ամբոնից և դպրոցներում, այսօր նա մութ ույժի դերում է թեմական դպրոցի անկարգութիւնների մէջ, թև ու թիկունք հանդիսանալով դաշնակցական հոգաբարձուների, հոգաբարձութեան նախագահ է Մարիամեան դպրոցում, նպաստամատոյցի անդամ, ռէալական դպրոցում կրօնուսոյց։ Եւ յանկարծ ճեմարանաւարտ այս կեղծը թոյլ է տալիս իրան կեղծ հրամաններ արձակել, կեղծ պսակներ կատարել, աֆերիստական իր ճարպիկ գործունէութեան թելերով կաշկանդել գաւառները, խաբեբայութեամբ պսակել, շահագործել միամիտ ու անտեղեակ գիւղացիների հաւատը և ապօրինի պսակներով զարդարել գեղջկուհու գլուխը, ամբարել դպրոցներին հասնող դրամը սեփական գրպանում...

Այս բոլորը ծածկել, այս բոլորը քօղարկել յանուն «ընկերութեան»։

Եւ իրաւ, ո՞վ գիտէ, գուցէ կօնսիստօրիայի փոշին ծածկէր այս զազրելի ոճրագործութիւնը, եթէ չը լինէր պ. Ս. Բ., որ եկաւ կօնսիստօրիան բողոքելու մի պսակահրամանի դէմ. դէպքը քննելուց յետոյ պարզվեց, որ մատեաններում բացակայում է այդպիսի հրաման և որ հրաման արձակողը privatissime եղել է տէր Եղիշէն։ Այնուհետև երևան են գալիս հետզհետէ նրա խոշոր զեղծումները, որոնց թիւն օրըստօրէ աւելանում է։

Զարմանում ենք, որ տէր-Եղիշէին, զեղծումները բացվելուց յետոյ, թոյլատրվում է յաճախել կօնսիստօրիայի նիստերը և միւս հասարակական հիմնարկութիւնները։ Ինչով է գրաւված հոգևոր իշխանութիւնը, ինչու է նա լռում, ինչու է թոյլ տալիս ոճրագործ քահանային շարունակել իր պաշտօնը...

Բողոք, հասարակութեան անողոք բողոքը կը լինի ընդհանուր զայրոյթի արտայայտութիւն...

Շուշեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Կաղզուան, փետրվարի 13-ին

«Ժամանակի» համարները թերթում եմ և տեսնում 12-ի մէջ նամակ խմբագրութեան Կաղզուանից «Մշակի» դէմ «Արամ Էլրակեան» ստորագրութեամբ։ Ընթերցողները պէտք է կարծեն, թէ յիշեալ Էլրակեանը գրագէտ մարդ է, ինքն է գրել այն, բայց ոչ, նա մի անուս մարդ է, ազգանունը հազիւ ստորագրող, որը գործիք է դարձել շատերի նման Դաշնակցութեան հին ու նոր «կօմիտաջիների» ձեռքում։ Սակայն շատ տգէտներ կը ցանկան իրանց սրտի մաղձը թափել այս կամ այն անհատի, կամ թերթի դէմ, բայց խմբագրի կոչումն է՝ հետամուտ լինել, իմանալ թէ այն գրվածները ինչ տեսակ աղբիւրից են բղխում և ըստ այնմ վարվել... Վերոյիշեալ նամակ գրողները կարող էին կարդացած չը լինել «Մշակի» յայտարարութիւնը, որով յայտնում էր, որ անցեալ թուի յունվարի գործադուլի պատճառով պակասած № №-ի փոխարէն հին բաժանորդներին կուղարկվեն ներկայ թուի յունվարի մինչև 15-ը լոյս տեսնող № №-ը. էլ ինչ հարկ կար այն անմիտ բարբաջանքները ապագրելու։ Պ. պ. համալսարանաւարտներ, եթէ դուք այդպիսի մանր բծախնդրութիւններով էք զբաղվում և ձեր դասական համբակների՝ առանց դրան էլ վայրենի զգացմունքները գրգռում, էլ ինչ՞ր աւելս չէ կարելի սպասել նրանցից... Շատ բընական է, որ նրանք «բօթօթի» ցաւով բռնված «Մշակին» քննող գտնան։ Եւ ի հարկէ այդ բոլորը ձեր խրախուսանքներից է առաջանում, որ միշտ կոչում էք «Գ. Արծրունու մահից յետոյ «Մշակ»-ը ընկել է»։ Սակայն երբեք չէ փոխել իր ուղին այդ թերթը, այլ միշտ մնացել է՝ անղուգական հայ մամուլի մէջ՝ իր կոչման վրա և մինչև օրս էլ նրա մէջ կարմիր գծի նման նկատվում է ժողովրդի ցաւերին արձագանք տալը, որ հիմնադրի ուղղութիւնն էր, և ինչպէս վերջին ժամանակներում ամեն մի նիւթական ու այլ վտանգներ աչքի առաջ ունենալով արձագանք եղաւ ժողովրդի՝ Դաշնակցութեան ճընշումներից՝ բարձրացրած աղաղակներին։ Իսկ եթէ անմահ Արծրունին այժմ կենդանի լինէր ու ձեր ռէժիմի տակ գործված ասսկալի արարքները տեսնէր, հաւատացէք, նա առաջինը կրծքելով՝ ձեռք կառնէր խարազանը, բացականչելով՝ դուրս կորէք յեղափոխութեան սուրբ ասպարէզից, անարժաններ... Իսկ դուք աւելի զայրոյթով պէտք է յարձակվէիք նաև նրա վրա... որովհետև ձեր կռիւը գաղափարի կռիւ չէ «Մշակի» դէմ, այլ անձնական, որ ոչ թէ նրա «ընկնելն է» ձեզ վիրաւորում, գրգռում... այլ որ նա ձեր մեղքերը ձեր երեսին է միշտ տալիս, դրա համար էլ ամեն մի գրչակի անտեղի լուտանքները հիւրասիրում էք ձեր թերթի մէջ, եթէ այն ձեզ մօտակողի դէմ է գրված։ Բայց այդ չէ ձեր կոչումը...

Առիթից օգտվելով աւելացնում եմ նաև, որ ձեր հետ միացած են շատ ուսեալներ... Նոյն իսկ ուսուցիչներ ապացուցված չարիքը խրախուսելու գործում—չարիք, որը ամբողջ մամուլը զբաղեցրեց իր հրէշաւոր երևոյթներով,—գալիս ենք այս համեմատական եզրակացութեան, որ թէև ամեն մի թունդ պահպանողական էլ իր մէջ խոստովանում է, որ լուսաւորութիւնը, ազատութիւնը խաւարից ու բռնութիւնից լաւ է, բայց իրանց ներքին անձնական հաշիւները հակառակն են պնդել տալիս նրանց։ Երևի այդ միևնոյն պատճառն է ձեզ թելադրում՝ չխոստովանել կատարված իրողութիւնը... Ահա թէ ինչու հազար տարիներից ի վեր ընտրեալ նահատակների թափված արիւնը չը կարողացաւ արդարութիւնը հաստատել աշխարհի վրա և ճշմարտութիւնը ամենքի համար ճշմարտութիւն դարձնել։

Թէև Դաշնակցութեան ջոջերը իրանց ձեռքին գործիք դարձրածների աչքերը փակելու համար հրապարակով չեն խոստովանում մամուլի բողոքը իրանց ռէժիմի տակ ծնված ու սնված չարիքները, բայց և այնպէս կամաց կամաց կրճատում են չարիքների աղբիւր կազմող կարգ ու կանոնները՝ որ և այժմ խեղճ, ճնշված ու հարստահարված մարդիկ ազատ շունչ են քաշում և իրանց բողոքները արտայայտում։

Մօտ օրերումս մի երիտասարդ (բաղնիսպան) փողոցի մէջ յարձակվում է Դաշնակցութեան նախկին «կօմիտաջի»-ներից մէկի վրա և պահանջում է իր 50 րուբլին, որ վերջինս առել է նրանից և տուել ռուս ազգային բաղնիքում (կորցրած) գողացված առարկաների փոխարէն։ Եւ այդ առաջին օրինակը չէ, որ «չինօվնիկներն» անգամ թողած ոստիկանութիւնը՝ դիմում էին մեր Հ. Յ. Դ. հերոսներին, համոզված լինելով, որ վերջիններս աւելի զօրեղ էին իրանց «պօլիցիական» դերի մէջ, քան ոստիկանութիւնը։

Մ. Ղազարեան

Շուշի, փետրվարի 14-ին

Թեմիս առաջնորդ Աշոտ եպիսկոպոս անցեալ տարի նոյեմբերի 9-ից մի յայտարարութիւն էր տուել Վեհափառ Հայրապետին, որով խնդրում էր թոյլատրել Գանձասարի վանքի ծածկի վերաշինութեան և այլ բարենորոգումների, ինչպէս և կաթնատնտեսարան բանալու համար՝ հոգաբարձուներ ընտրել։

Ծերունազարդ Հայրապետը յարգել էր սրբազանի խնդիրը և թոյլատրել էր հոգաբարձուներ ընտրել։ Այնուհետև Աշոտ եպիսկոպոսը անցեալ տարվայ նոյեմբերի 29-ից թիւ 306 գրութեամբ վերաշինութեան գործի և կաթնատնտեսարանի համար հոգաբարձուներ է հաստատել բժիշկ Խաչատուր Բահաթրեանցին, Ներսէս Մելիք-Փաշայեանցին և Աբրահամ-բէգ Հասան-Ջալալեանցին։

Նորընտիր հոգաբարձութիւնը ընտրել է նուաստիս գանձապահ։

Մինչև այժմ ստացվել են հետևեալ գումարները. Դաւիթ Իսրայէլեանից 300 ր., Խաչատուր Բահաթրեանցի հաւաքած փողից 310 ր. 20 կ., Լևոն Բահաթրեանից 10 ր., Ներսէս Մելիք-Փաշայեանից 100 ր., Մնացական Խունունցից 50 ր., Ցակովբ Մանդասարեանից 25 ր., Մովսէս Տահնազարեանից 100 ր., Իսահակ Թադէոսեանից 200 ր., Ալէքսանդր Մելիք-Ազարեանից 100 ր., Ստեփան Դովլաթեանից 10 ր., Քրիստափոր Ղլճեանից 25 ր., Գրիգոր Միրզայեանից 25 ր., Միքայէլ Խուլարեանից 25 ր., Աննա Արսէնեանից 5 ր., Արտաշէս Սէյլանեանից 15 ր., Բագրատ Շխիեանից 50 ր., Խուրշուդ Ամիրջանեանից 15 ր., Սամսոն Թադէոսեանից 25 ր., Խրիստափոր Մարգուլեանից 10 ր., Պատուական Ծատուրեանից 5 ր., Միսակ Հասան Ջալալեանից 200 ր.։ Բոլոր գումարն է մէկ հազար ութ հարիւր վաթսուն և հինգ րուբլի քսան կոպէկ (1865 ր. 20 կ.)։

Վերաշինութեան գործը արդէն սկսված է, փայտեղէններ և նիւթեղէններ արդէն բերված են։

Մի քանի գործին տեղեակ մարդկանց ցուցումների համաձայն՝ վանքի գմբեթի վերաշինութեան համար որոշված է ամենաքիչը չորս հազար (4000) րուբլի ծախք, որից ստացվել է 1865 րուբլի, իսկ մնացեալ պակասորդը լըրացնելու համար մեր բարերար անձանց ուշադրութիւնն եմ հրաւիրում և թող չը զլանան մի այդպիսի բարենպատակ գործի համար իրանց փողը չը խնայել։

Նուէրները խնդրում ենք ուղարկել իմ հասցէով։ Նուիրված գումարները և ծախքը որքան լինելը լինի, մանրամասն հաշիւ կը տամ հասարակութեան լրագրի միջոցով։

Գանձապահ վերաշինութեան գործի՝
Ներսէս Մելիք-Փաշայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասի Փոխարքան թոյլատրել է տալ հայ-լուսաւորչական կոնսիստորիային հայոց եկեղեցական կալուածքների եկամուտի միացորդներից 800 րուբլի Սանահնի վանքի կարիքների համար։

—

Թիֆլիսում, Կովկասի պատգամաւորներից մէկից լուր է ստացվել, որ շուտով Պետական Դումայում կը քննվի ագրարային հարցը, որի հետ, ի միջի այլոց, կապված է նաև Կովկասի գիւղացիների՝ իրանց կալուածատէրերից կախման դրութիւնը բարձելու հարցը, ինչպէս և զէմստվային հաստատութիւնների համար նոր որոշում մտցնելու խնդիրները, որի հետ շաղկապված է նաև նոյն դրութիւնը ծայրերկիրներում մտցնելու հարցի հետ, յարմարեցնելով նրան տեղական առանձնայատկութիւններին։

—

Շուշու գաւառապետի պաշտօնակատար Գեբասիմովի տեղ նշանակված է Գանձակի գաւառապետի գլխաւոր օգնական Ռ. Ի. Լօկատօշը։ Պ. Լօկատօշը հաւասարապէս մեծ ժողովրդականութիւն է վայելում հայ և թուրք ազգաբնակութիւնների մէջն, որ Գանձակի նահանգում բացառիկ երևոյթ է։

—

Գանձակի նահանգապետ նշանակված է Երևանի փոխ-նահանգապետ Կօվալևօվը։

—

Առաջիկայ ապրիլին երկրագործութեան դեպարտամենտը մտադիր է ոչխարապահների ռուսաց ժողով գումարել հարաւային և հարաւ-արևելեան Ռուսաստանի յայտնի խաշնարածների, բուրդ մաքրող գիւղատնտեսական ընկերութեան, բօրսային կոմիտէտների ներկայացուցիչների մասնակցութեամբ և այլն, որին միևնոյն ժամանակ ներկայ կը լինեն ֆինանսների, առևտրա-արդիւնաբերական և ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնների ներկայացուցիչները։ Ժողովի քննութեան են առաջարկվելու հետևեալ հարցերը՝ 1) ոչխարների հօտերը նոր արօտատեղեր տեղափոխելու գործը դիւրացնել, 2) միջոցներ գտնել հարաւային Ռուսաստանի արօտատեղիները համապատասխան խոտաբոյսերով բարելաւելու և 3) միջոցներ գտնել մերինոսեան այծերի հօտերը վերականգնելու այն մասերում, ուր ագրարական անկարգութիւնների ժամանակ նրանք ոչնչացել են։

(«Օ. Б.»)

—

Ստացանք Մ. Մարիկի «Երկրային սէր» բանաստեղծութիւնը, գեղեցիկ կազմով, գինն է 30 կոպէկ։

—

Մի պատգամաւորութիւն Շուշուց մտադիր է միջնորդութիւն յարուցել Կովկասի Փոխարքայի առաջ, խնդրելով, որ գեն.-նահանգապետ Բաուէրը իր բնակավայրը տեղափոխէ Շուշի, մինչև ներկայ տարվայ սեպտեմբեր ամիսը։ Այդ խնդիրը կապ ունի առաջիկայ քօչի և քօչւորների հետ ճանապարհին և ապագայ բարդութիւնների առաջն առնելու համար։

—

Թիֆլիսի 3-րդ քաղաքամասի—Ներսէսեան, Կուզնեցկի և Բազարնայա փողոցների առևտրականները Պետական Դումայի նախագահին մի միացեալ խնդրագիր են ուղարկել, որով խնդրում են տալ այն վնասները, որոնք կրել են նրանք 1905 թ. դեկտեմբերի 22-ին, Թիֆլիս քաղաքում տեղի ունեցած դէպքի պատճառով։ Ստորագրել են 61 մարդ. վնասի չափը հասցրած է 300,000 րուբլու։

—

Այսօր Զուբալովի հասարակական տանը կը կայանայ Ջաչինկայեվի դասախօսութիւնը «Աշխատաւորական պայմանագիր ինքնակալութեան ծագման էպօխայում»։

—

Մինչև մարտի 9-ը քաղաքային սուր-վարակիչ հիւանդութիւնների հիւանդանոցում եղել են քութէշով հիւանդներ—38 հոգի, ծաղիկով հիւանդներ չեն եղել, բգացումով հիւանդներ 14 հոգի և տիֆով—15 հոգի։ Քաղաքային գիշերօթիկ ապաստարաններում վերջին երեք օրվայ ընթացքում տիֆով հիւանդացողներ չեն եղել։

—

Այսօր, առաւօտեան ժամը 8-ից բացվում է ֆունիկուլեօրի կանոնաւոր երթևեկութիւնը Մամադաւիթի սարի վրայ։

—

Այսօր, ժողովրդական աուդիտօրիայում Աւճալեան փողոցում, բժ. Նաումենկօն կը կարդայ դասախօսութիւն «սուր վարակիչ հիւանդութիւնների մասին ընդհանրապէս և քութէշի մասին մասնաւորապէս և նրանց բժշկելու նոր միջոցները», մոգական լապտերներով։ Սկիզբն է երեկոյեան 6½ ժամին. մուտքը ձրի է։

—

Մարտի 9-ին կայացաւ քաղաքային վարչութեան նիստը ֆինանսական և վերստուգիչ մասնաժողովների հետ միասին, ուր քննվեց և ընդունվեց ծառայողների ռոճիկները աւելացնելու նախագիծը։ Յիշեալ աւելացումը կազմում է 34 o/o անցեալ տ. եկամտի դէմ և, բացի դրանից, ռոճիկների աւելացնելը հակառակ համեմատական է ծառայողների ստացած ռոճիկի, այսինքն ամենաքիչ ռոճիկ ստացող ծառայողը ստանալու է կարելի աւելի գումարը, որով տարեկան մինիմալ ռոճիկը հաւասարվելու է 540 րուբլու։ Նիստին քաղաքագլուխ իշխ. Ձերբեզով ի միջի այլոց մատնանշեց, որ քաղաքային ինքնավարութիւնները ընդհանրապէս և քաղաքագլուխը մասնաւորապէս լիակատար իրաւունք ունեն յօժարակամ տեղափոխել այս կամ այն ծառայողներին համաձայն նրանց ընդունակութեան և մատուցած ծառայութեան։ Ծառայողները ընդունելով այդ իրաւունքը վերապահված քաղաքագլխին, պատասխանեցին, որ նրանք այդպիսի տեղափոխման դէմ ոչինչ չունեն, ևս առաւել, որ այդպիսի փոփոխութիւնը կարող է սերտ կապ ունենալ ռոճիկը աւելացնելու հարցի հետ։ Միայն մասնաժողովի անդամներից մի քանիսը առարկելով, որ երկար ժամանակ ծառայողներին քիչ ռոճիկներ է տրվում և ընդհակառակն, պատասխանեցին, որ ներկայ դէպքում քննվում է ընդհանուր աւելացման հարցը և ոչ թէ երկար տարիներ մատուցած ծառայութեան համար ռոճիկները աւելացնելու մասին։ Ռոճիկները աւելացնելու յիշեալ նախագիծը վարչութիւնը ընդունեց քաղաքային դումային ներկայացնելու համար։

—

Թիֆլիսի դումայական մասնաժողովի վերջին նիստում քննվում էր մի կրակոտ հարց։ Արտասահմանից լուրեր են ստացվել, որ իբր անոնիմ ընկերութիւնը դիտմամբ միջոցներ է ձեռք առնում իջեցնելու իր ակցիաները (բաժնեթուղթ) օտարազգի բօրսաներում, որպէսզի այդ ճանապարհով ստիպէ մանր բաժնետէրերին թողնել շուկան և վաճառել իրանց մասերը համարեա ձրի. դրա մէջ մասնաժողովը համոզվում է և նրանից, որ անոնիմ ընկերութիւնը, բացարձակ վնաս իր շահերի, բաց է թողնում շատ քիչ քանակութեամբ վագոններ, որոնք բաւարարութիւն չեն տալիս հասարակութեան պահանջներին, ինչպէս և նրանով, որ մօտ 30 փչացած վագոններ այժմ անօգուտ կերպով կանգնած են պարկում և ընկերութիւնը չէ շտապում որքան կարելի է շուտ վերանորոգել նրանց։ Ի նկատի առնելով այս բոլորը, մասնաժողովը որոշում է իր հետևեալ նիստին հրաւիրել Թիֆլիսի էլէքտրաքարշի անոնիմ ընկերութեան վերատեսչին՝ բացատրութիւն տալու համար։

—

Մօտիկ ապագայում 6-րդ քաղաքամասում մի խումբ ինտելիգենտ մանկավարժների ձեռքով բացվելու է մանկական ընթերցարան։

—

Մարտի 9-ին 2-րդ քաղաքամասի բժիշկ Մազալովը յանձնել է 2-րդ քաղաքամասի պրիստաւին, որ մարտի 6-ին Սերեբրեանի փողոցում յանկարծակի վախճանվել է Յարութին Մխիթարեանը։

—

Մարտի 8-ին տեղացի Աւետիս Աւետիսեանը, որը բնակվում է Աւճալեան փողոցում իր սեփական տանը, յայտնել է 9-րդ քաղաքամասի պրիստաւին, որ նրա բնակարանից անյայտ չարագործներ գողացել են 40 ր. 50 կ.։ Գողութեան մէջ կասկածվում է դռնապան Յովսէփ Զանազեանը, նրա ազգականներ Յարութին Մարգարեանը և Մովսէս Խաչատարեանը, որոնք ձերբակալված են։

—

Մարտի 8-ին, երեկոյեան 9½ ժամին Վանքի մայր եկեղեցու մօտ III-րդ քաղաքամասի ոստիկանութիւնը ձերբակալել է 2 անյայտ անձերի, որոնց մօտ խուզարկելիս գտել են՝ մէկի մօտ, որը իրան անուանել է տաճկահպատակ Յովսէփ Կարայեան, «Նագանի» սիստեմի ատրճանակ (փամփուշտներով լի) և 43 րուբլի փող, իսկ միւսի մօտ որը, իրան անուանել է պարսկահպատակ Մարգար Աւագեան, փամփուշտաման և 36 րուբլի փող։ Ձերբակալվածներին ուղարկել են կոմենդանտի վարչութիւնը։

—

Մարտի 9-ին, երեկոյեան ժամը 7½-ին Լօրիս-Մելիքօվսկի փողոցում, հոգևոր սեմինարիայի դիմաց գործեցի Մախար Ցիկլաուրին հարբած դրութեան մէջ, ցանկանալով էլէքտրաքարշի ետևի վագօնից տեղափոխվել առաջին վագօնը, ընկաւ երկու վագօնի մէջն, ուր կոտրվեց աջ ոտքի ոսկորը։ Վիրաւորվածին տարել են Միքայէլեան հիւանդանոցը։

—

Բաթումի քաղաքային ինքնավարութիւնը Կովկասի Փոխարքայի առաջ միջնորդութիւն է յարուցել՝ յանձնել վերջերս կառուցած Ալէքսանդրեան տաճարը գինւորականից հոգևոր վարչութեան։

—

Լեհական և տերրիտօրիալ կօլօյի նիստում, մինիստրական դեկլարացիայից յետոյ, լեհական պատգամաւորների տակտիկայի խնդրի նկատմամբ որոշված է հետևել այն քաղաքականութեան, որպիսին կընդունէ օպպօզիցիան։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը շրջաբերականով յայտնեց գեներալ-նահանգապետներին նախազգուշացնել աքսոր ուղարկվողներին չընտրել, իբրև բնակչութեան տեղ, Բաթումը, Բագուն և Թիֆլիսը, որտեղից նրանք անյապաղ կաքսորվեն։

—

Մինիստրների խորհրդի որոշում կայացաւ, որպէսզի երկաթուղու ճանապարհների մեծ կայարաններում արգելվի մարդատար գնացքի ժամանակ պլատֆորման դուրս գալ, ինչպէս, օրինակ, Գերմանիայումն է անվում։ Այն անձերը, որոնք ցանկանում են ուղեկցել գնացողներին կամ դիմաւորել եկողներին, պէտք է ձեռք բերեն պերրօնի տոմսակներ, որոնք իրաւունք են տալիս դուրս գալ պլատֆորմա։ Ժողովրդի յարմարութեան համար յիշեալ տոմսակները կարելի է ձեռք բերել աւտոմատներից։

—

Ներկայ ժամանակ, երբ մարդկութեան մատաղ սերնդի ամբողջ դաստիարակութեան գործը կանցնի կանանց ձեռքը։ Անգլիայում և Հիւսիսային Ամերիկայում կրթական ասպարէզի վրա գերակշռում են արդէն կանայք։ Սրանից յիսուն տարի առաջ Անգլիայի ժողովրդական 5 ուսումնարաններից 4-ի ուսուցիչները միայն տղամարդիկ էին։ 1870 թւին ուսուցիչների ու վարժուհիների թիւը մօտաւորապէս հաւասարվեցին, իսկ ներկայումս չորս ուսումնարաններից երեքը գտնվում են կանանց ձեռքում, այնպէս որ 20,000 վարժուհիներին ընկնում է 4000 ուսուցիչ։ Նոյն երևոյթը նկատվում է խոշոր չափով Ամերիկայում ևս։

(«Б. В.»)

═

Ներկայումս Պետերբուրգի ցենզուրական կօմիտէտում երեկոյեան զբաղմունքներ են սահմանված։ Մամուլի վերաբերեալ գործերի կօմիտէտում երեկոյեանից սկսած՝ մինչև առաւօտ աշխատում են 12 ցենզօրներ, որոնք հեռախօսով զեկուցում են տալիս մամուլի մէջ լոյս տեսած կարևոր յօդուածների ու տեղեկութիւնների մասին մամուլի վերաբերեալ գործերի գլխաւոր վարչութեան կառավարչին։

(«Товарищъ»)

—

Սօցիալ-յեղափոխականների կուսակցութեան կենտրոնական կօմիտէտը յանձնարարել է Գերշունին Ամերիկայից անցնելիս մնալ մի քանի շաբաթ Միացեալ-Նահանգներում ծանօթացնելու ամերիկական ռամկավարներին ռուսաց ազատագրական շարժման և սօցիալիստ-յեղափոխականների նրա մէջ ստանձնած դերի հետ։ Այդ նպատակով մի շարք քաղաքներում բազմամարդ միտինգներ և բանկետներ են կազմվել։ Վեց շաբաթվայ ընթացքում միտինգներից գոյացել է՝ 88,586 ֆրանկ, բանկետներից 58,833 ֆրանկ, զանազան նուիրաբերութիւններից՝ 7,632 ֆրանկ, մանր մուտքեր 1912 ֆրանկ։ Ընդամենը 156,964 ֆրանկ։

(«Парусъ»)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

9 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մարտի։ Մինիստրների խորհուրդը մարտի 7-ի նիստում ընդունեց Պետական Դումա մտցնելու համար ժողովրդական լուսաւորութեան մինիստրի առաջարկութիւնը՝ ընտրել հոգաբարձական մարմիններ տարրական դպրոցներին կից։ Հոգաբարձական կազմի մէջ, բացի հոգաբարձուներից և ուսանողներից, մտադրվում է մտցնել տեղական ինքնավար հաստատութիւնների ներկայացուցիչներին, ինչպէս և տեղական ազգաբնակութեան ընտրեալներին։ Հոգաբարձուների վրա պարտականութիւն է դրվում՝ հոգալ դպրոցների բարեկարգութեան և սանիտարի դրութիւնը բարելաւելու մասին։

ԲԵՌԼԻՆ, 9 մարտի։ Բիւլովի պատուաւոր նախագահութեամբ կազմվեց թոքախտով և այլ հիւանդութիւններով հիւանդացող երեխաների մահվան դէմ կռուելու ընկերութիւն։ Ընկերութեան միջոցները լրացնելու համար տարածվելու են բարեգործական մարկաներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մարտի։ Վարշավայի գեներալ-նահանգապետի արած հարցման պատճառով առևտրի մինիստրութիւնը բացատրել է, որ այն շէներում և գիւղերում, ուր ազգաբնակութեան մեծագոյն մասը կազմում է ոչ ռուս ազգաբնակութիւնը, առևտրը և ծառայողների աշխատանքները կարելի է թոյլ տալ ժամը 12-ից այն տօն օրերը, որոնք չեն տօնում մեծամասնութիւն կազմող օտարազգիները։

ՍԱՆ-ՌԵՄՕ, 9 մարտի։ Տիտտօնին յանձնարարեց քաղաքապետի օգնականին ցաւակցութիւն յայտնել Լամզդօրֆի ընտանիքին իտալական կառավարութեան անունից։

ՏԱՇՔԵՆԴ, 9 մարտի։ Առաջին բատարէայում գողացված են 100 ատրճանակներ։ Բռնված են 5 չարագործներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մարտի։ Պետական Խորհրդին 35 անդամների ստորագրութեամբ մի յայտարարութիւն է ներկայացրած՝ որը ըստ էութեան հանդիսանում է առաջին—Խորհրդի կազմվելու ժամանակից—հարցապնդումը՝ ուղղված ժողովրդական լուսաւորութեան մինիստրին համալսարանների անկարգութիւնների առիթով։ Հարցապնդման մէջ ի միջի այլոց ասված է. «Պետական իշխանութիւնը, ի հարկէ, բնաւ հանգիստ սրտով չէ կարող վերաբերվել դպրոցը իբրև քաղաքական կռւի զէնք դարձնելու աշխատանքներին և ձգտումներին։ Չէ կարելի թոյլ տալ, որպէս զի կրթական հաստատութիւնները, առաւելապէս պետական հաշւով պահվողները, ծառայեն հակակառավարական և հակահասարակական նպատակների, որպէս զի նրանց պատերի մէջ տեղի ունենան հակաօրինական, բացարձակ յեղափոխական բնոյթ ունեցող ժողովներ։ Օրէնքի այդօրինակ խախտումը կրկնվում է յաճախակի կերպով, բայց միշտ գտնում է միում այն՝ թէ արդեօք, ենթարկվեցին պատասխանատւութեան անգործութեան համար կրթական մարմնի պաշտօնական անձինք, որոնք արդարև մեղաւոր են ապօրէն յեղափոխական համախմբումներ թոյլատրելու։ Դրանով ստեղծվում է վերին աստիճանի վտանգաւոր ներողամտութիւնը, որպիսին ընդունակ է դրդել սրանից յետոյ մատի արանքով նայել դէպի պաշտօնավարական պարտականութեան նմանօրինակ զանցառութիւնները։ Հազիւ թէ կասկածի ենթակայ լինի այն հանգամանքը, որ փետրվարի 20-ին Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններում միջոցներ ձեռք չէին առնված ապօրէն համախմբումների առաջն առնելու կամ յամենայն դէպս նրանց ցրելու համար։ Մոսկվայի համալսարանում գեռ ժողովը յանցաւոր բնաւորութիւն էլ ստացաւ»։ Հարցապնդումը վերջանում է 4 կէտերից բաղկացած մի բանաձևով. առաջին երկու կէտերում հարց է տրվում—յիրաւի՞, Պետերբուրգի և Մոսկվայի համալսարաններում տեղի են ունեցել ապօրէն ժողովներ. երրորդում—քննութիւն կատարվե՞լ է արդեօք, ո՞վ է մեղաւոր ժողովը թոյլատրելու մէջ. չորրորդում—մեղաւորները պատասխանատւութեան ենթարկվե՞լ են, թէ ոչ։ Ի թիւս միացածների, հարցապնդումը ստորագրել են Ակիմով, Ալեքսեև, Բերեզև, Գոնչարով, Դուրնովօ, Զինովիև, Կասատկին, Ռոստովսկի, Լուկյանով, Նարիշկին, Սալին, Սամարին, Ստիշինսկի, Շտիւրմէր, կոմս, Տօլ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մարտի։ Առաջ ենք բերում այն ուղերձի պատճէնը, որ մատուցվեց հասարակական գործիչների կլուբի անդամների նախաձեռնութեամբ մինիստրների խորհրդի նախագահին։ «Ամենայարգելի Պետր Արկադիևիչ! Ձեր հանգիստ և համոզված խօսքը, որ ասացիք Պետական Դումայում, մէկ անգամ ևս ցոյց տուեց Ռուսաստանին, որ Կայսրից Ձեզ շնորհված իշխանութիւնը գտնվում է մաքուր, պատուաւոր և ամուր ձեռքերում։ Արհաւիրքներից տանջված հայրենիքը ամենից առաջ կարիք ունի մի այնպիսի կառավարութեան, որպիսին երևան հանելով ժողովրդական կարիքների ընդարձակ հասկացողութիւն, դրա հետ միասին իր հիմնական նպատակը դնէ՝ կարգ ու կանոնի և օրինականութեան պաշտպանութիւնը։ Ի դէմս Ձեր մենք տեսնում ենք այդօրինակ կառավարութեան առաջնորդի։ Ողջունելով Ձեզ, ցանկանում ենք Ձեզ ույժ և առողջութիւն՝ հայրենիքի պատմական մեծ ծառայութեան համար այսպիսի ծանր նրա համար ժամանակում»։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 մարտի։ Կրկին կողոպուտներ, մարդասպանութիւններ, զինված յարձակումներ կայսրութեան ամեն տեղերում։

ՌԻԳԱ, 9 մարտի։ Վերատեսչի կարգադրութեամբ ժամանակաւորապէս պոլիտեխնիկումում պարապմունքները դադարեցին։ Պատճառը անթոյլատրելի ժողովն է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մէզասեռ. հ.։
Կ. Մ. ՉԻԿՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Ձ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱԻՆՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մաշկի, վեներակ. և վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—1—2 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻՆՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախտրերով (կօմ ռելիւոմէ) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Մ. Պ. Ջախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը {առաւ. 10—12 ժ.
Տելեֆոն № 1087
Սօլօլակ, Լերմօնտօվսկայա փող., 16.
(ա. օ.) 116—150

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲՐԻՆ»
Միայն Միխաիլ Լեբեդևի
„Этикетъ утвержденъ прав." մակագրութիւնով

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։
10, 20, 30 30—40

„ԻՐԱՒՈՒՆՔ"
ԼՐԱԳԻՐ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Բուլղարիոյ Վառնա քաղաքին մէջ կը հրատարակվի ամեն չորեքշաբթի և շաբաթ օրեր. զուտ հայկական և անկախ թերթ մըն է սա, որ կը շարունակվի անընդհատ տասն երկու տարիներէ ի վեր։
Բաժնեգինն է Ռուսաստանի և Պարսկաստանի համար 5 րուբլի կանխիկ։
Հասցէն՝ Redaction du journal «Iravounk» (Bulgarie) Varna։
5—8

Լոյս տեսաւ
ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ
Մասն առաջին, ա. տարի
ԿԱԶՄԵՑ Հ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
Գինը 50 կոպ.
Գումարով գնողներին բաւարար զեղչ։
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустяну. 2—5

Լոյս տեսան
«Անի հրատարակչական ընկերութեան» հրատարակութեամբ՝
1. Հայ ներուսուհին (Տաճկահայ շարժումներից) Վ. Նեմիրօվիչ-Դանչենկօ, թարգմ. Ա. Ա. գինը 10 կ.։
2) Кавказскіе наброски. Изъ воспоминаній русскаго офицера объ армяно-татарскихъ столкновеніяхъ. Владиміръ Вадинъ, цѣна 10 к.։
«Սափրիչ»-ի բաժանորդները ճանապարհածախս չեն վճարում. 20 օրինակից աւել գնողներին 20% զեղչ. 100 օրինակից աւել գնողներին 30% զեղչ. հատով գնողները կարող են ուղարկել 2-ական նամականիշ (մարկա)։
Դիմել՝ С.-Петербургъ Казанская 46.
3—3 Հ.Չ.Կ. Редакція «Сапричъ»

Լոյս տեսաւ
ԽԱՆ-ԱԶԱՏԻ
„ԻՆՉ Է ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ"
48 երես
Գինն է 10 կոպ.։ Ծախվում է բոլոր գրավաճառանոցներում և հեղինակի մօտ։
2—5

Պ. Եա. Ավսարգիսովի
ՏՆԿԱՐԱՆԸ
բաց է թողնում արտասահմանի, Ռուսաստանի և տեղական տեսակի
պղպջատու ծառեր
եժանագին գներով
Ст. Скра зак. ж. дор. Авсаркисову. Կատալօգները ուղարկվում են ձրի։
(Հ.) 5—10

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ
(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բաթում			
Պօստատար	1 ժամ	24 ր.	ցերեկվայ
Մարդատար	8 »	5 »	առաւօտեան
»	11 »	8 »	գիշերվայ
Թիֆլիսից դէպի Բագու			
Մարդատար	9 ժամ	13 ր.	առաւօտ.
Պօստատար	7 »	48 »	երեկոյեան
Մարդ-ապրանք.	11 »	38 »	»
Թիֆլիսից դէպի Երևան			
Պօստատար	12 ժամ	40 ր.	գիշերվայ

Լոյս տեսաւ
„ԵՐԿՐԻ ՁԱՅՆԻ"
№ 10
Ատոմ Նարճանեան բանաստեղծի պատկերով և
ՀԵՏԵՒԵԱԼ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ
Ծագում է վերջապէս գիտակցութեան արշալոյսը Տ. Զաւէն
Թիւրքերն ու յառաջդիմութիւնը III Սաքաճեզջին
Արևելեան հարցի կրած էվօլիւցիան Ռ. Պինոն
Ռուսաստանի թուրքերը և սահմանեան բնակչութիւնը I Տ. Զ.
Թիւրքահայ բանաստեղծութիւն (Դաբերու վրէժ) Ա. Եարճանեան
Թիւրք բանաստեղծութիւն (Ցիշէ) Էքրէմ բէյ
Գծեր օսման. նորագոյն պատմութիւնից Ա. Գիւրջեան
Կարծիքներ (Թիւրքահայ հարցի մասին) Մ. Զալեան
Թղթակցութիւններ
I Նամակ Կարնից Արտեմիս
II « Վանից Վանեցի
Փոքր-Ասիայի շարժումները «Թէքակէը»
Լուրեր
Խմբագրութեան կողմից
Յայտարարութիւններ

Բ Ժ Ի Շ Կ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առաւ. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճավաձէի № 36
84—100

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ
ՏԱՃԿԱՀԱՅ ԽՆԴԻՐԸ
ԵՒ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՊԼՕՄԱՏԻԱՆ
Հետևեալ բովանդակութեամբ.
Յառաջաբան.—1. Ներածութիւն։—2. Տաճկահայ խնդրի լուծման ճանապարհը։—3. Եւրօպայի շահերը Թիւրքիայում։—4. Պետութիւնների դիպլօմատիան և Թիւրքիան։—5. Հայկական հարցի լաւատեսութեան և յոռետեսութեան շրջանը։—6. Ռուսաստանի քաղաքականութիւնը և տաճկահայ խնդիրը։—7. Անգլիայի քաղաքականութիւնը և տաճկահայ խնդիրը։—8. Ֆրանսիական քաղաքականութիւնը և տաճկ. խնդիրը։—9. Գերմանիայի քաղաքականութիւնը և տաճկ. խնդիրը։—10. Աւստրիան, Իտալիան և տաճկ. խնդիրը։—11. Ամերիկայի Միացեալ-Նահանգները և տաճկ. խնդիրը։—12. Ամփոփում և եզրափակում։—13. Հայ Յեղ. Դաշնակցութեան գործունէութեան երկու ճանապարհը (I Յեղափոխական ճանապարհ կամ յեղափոխական գործունէութիւն երկրի ներսում)։—14. Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան երկու ճանապարհը (II Քաղաքական ճանապարհ կամ քաղաքագիտական պրօպագանդիստական գործունէութիւն երկրից դուրս)։
140 երես. գինն է 40 կոպ.
Դիմել՝ «Ձայն»-ի խմբագրութեան և «Գուտտենբերգ», «Փարոս», «Образованіе» գրավաճառանոցներին։ 1—2

ՍԵՆ-ՍԵՆ
Տուփը 20 կոպէկ։
Ամերիկական մաստակ և կանֆէտներ։
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
բոլոր դեղատներում և
լաւագոյն խանութներում։
Գլխաւոր պահեստն է՝ «Единственная торговля по Американски.
Միքայէլեան փող. № 96.
(Կ. Չ. ու.) 1—5

Կայքերը կրակից փոխադարձ ապահովագրող ընկերութեան

ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընկերութեան պ. պ. անդամների, որ ներկայ տարվայ մարտի 18-ին, ցերեկվայ ժամը 12-ին քաղաքային խորհրդի դահլիճում

ԿԸ ԿԱՅԱՆԱՅ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Մարտի 4-ին չը կայացած ժողովի փոխարէն

ՔՆՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Հաստատել վարչութեան 1906 թ. հաշիւը և 1907 թ. վարչութեանը վերաբերեալ նախահաշիւը։
2) Որոշել 35% զեղչը այն կայքերի ապահովգրական մրցանակից, որոնք ապահովագրված են ընկերութեան մէջ 18 տարի և մտնում է 19-րդում։
3) Լսել ընկերութեան կանոնադրութեան § 1. փոխելու մասին զեկուցումը։
4) Պաշտօնական անձերի ընտրութիւններ կատարել։
ա) վարչութեան մէկ անդամի, հերթով դուրս գնացող իշխ. Ի. Մ. Բեհբութեանի փոխարէն։
բ) վարչութեան անդամութեան համար մէկ թեկնածուի, հանգուցեալ Ն. Ա. Գրիգորեանի փոխարէն։
գ) Դիտող մասնաժողովի 2 անդամների, Ի. Ա. Մելիք-Բեգլարեանի և Ա. Ի. Օրբելիի ծառայութեան ժամանակամիջոցը լրանալու պատճառով։
դ) Երկու թեկնածուների ստուգիչ մասնաժողովի անդամութեան համար փոխարէն Ֆ. Կ. Էրնի և ընկերութեան անդամներից դուրս գնացած Ի. Պ. Ուլացևի։

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրաւունքի վկայականները պէտք է ներկայացվեն վարչութեանը ընդհանուր ժողովի նախընթաց օրվայ ցերեկվայ 12 ժամից ոչ ուշ։

Սրանով վարչութիւնը պատիւ ունի հաղորդել պ. պ. անդամներին, որ, ընկերութեան կանոնադրութեան § 27 հիման վրա, նշանակված ժողովը, կը կայանայ օրէնքով կայացած, չը նայելով ներկայ եղող անդամների թւին։

(մար. 11, 17,) 1—2

Въ первыхъ числахъ марта начнетъ выходить въ Тифлисѣ
ЕЖЕНЕДѢЛЬНАЯ
литературная и политическая газета
„ГРУЗИНСКАЯ МЫСЛЬ"
Подписка принимается въ конторѣ редакціи на Большой-Ванкской д. Мартирузова, при типографіи Груз. Изд. Тов-а.
ПОДПИСНАЯ ЦѢНА

На годъ	5 р
„ ½ годъ	3 „
„ 1 „	50 к.
Отд. №.	10 „

Объявленія на первой страницѣ 10 к. за строку петита, а на послѣдней 7 коп.
Для личныхъ объясненій редакція открыта по буднимъ днямъ отъ 12 до 2 ч.
3—3

Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութեան Վարչութիւնը

սրանով յայտարարում է, որ մարտի 10-ին, 1907 թ. ցերեկվայ ժամը 11-ին, վարչութեան շէնութեան մէջ Պուշկինսկի փողոցում սեփական տանը կը ծախվեն ընկերութեանը միացած կալուածքները. Մ. Դ. Ալխազովայի՝ 5-րդ քաղ. Մուխրանսկի և Պօլիցէյսկի փողոցներում։
Մ. Ա. Կովալչինայի՝ X քաղ. Շերեմետևսկի փող.
Ն. Գ. Մարգվալովի՝ IX քաղ. Տօւմանովսկի փող. (այժմ Մինկվիցեւսկի փող). № 8

Նոյնպէս կը ծախվեն նաև ուրիշ կալուածքները, եթէ ցանկացողներ կը լինեն։ Աճուրդի յետագայ պայմանների և մանրամասնութիւնների համար կարելի է դիմել ընկերութեան վարչութեանը, ամեն օր ցերեկվայ. 10—2 ժամը։

(Չ. Կ.) 2—2

Հայոց Ազգագրական Ընկերութեան
հրատարակութեամբ
լոյս տեսաւ
պատկերազարդ, եռամսեայ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ
1907 թ. № 1. (XV գիրք)
Բովանդակութիւն. Հայ ժողովրդական վէպը՝ Մ. Աբեղեանի. Համմուրաբիի օրէնգիրքը՝ Լ. Բաբայեանի. Դաւիթ վարդապետ Ալաւկայ որդի՝ Կ. Կոստանեանի. Հայոց ժառանգական իրաւունքը՝ Խ. Սամուէլեանի. Էջմիածին և Հայոց հնագոյն եկեղեցիներ (առանձնապէս Զուարթնոց եկեղեցին) Մեսրովբ վարդապետի. Նախիջևանի ոստիկանական շրջան՝ Ե. Լալայեանի. Նոր-Բայազէտի գաւառ (պեղումներ) Ե. Լալայեանի։ Մի դրոշմ. Մատենախօսութիւն. Քաղուածք հայոց Ազգագրական ընկերութեան արձանագրութիւններից։
Գիրքը զարդարված է 25 պատկերներով
Տարեկան բաժանորդագինն է 5 ր, մի գիրքը 1 50 կ. № 2 լոյս կը տեսնի մայիսին։
Դիմել՝ Въ редакцію журнала «Азгаграканъ андесъ», Тифлисъ. 5—10

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ.

Электопечатня Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская № 5.